

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ

ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ, ԽԱԶԱԿԻՐՆԵՐԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ,
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, Հ. Ա. ԵՐԵՒԱՆ 2005,
552 էջ, Հ. Բ, ԵՐԵՒԱՆ 2007, 672 էջ (ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ ԳԱՂՈՒՍՏ
ԿԻՒՊԼԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ)*

Մեր ձավոր Արեւելքի եւ Կիլիկյան Հայաստանի անցյալն ընկալելու, համաշխարհային առաջընթացի ուղիներն հասկանալու համար պատմագրութեան մեջ կարեւոր նշանակություն է ձեռք բերել խաչակրաց ռազմարշավների ու Միջերկրականի արեւելյան ափերին ժԱ-ԺԴ դդ. գոյատեւած քրիստոնյա պետութիւնների պատմութեան հետազոտությունը: Խաչակրաց ռազմարշավների, Հայաստանի պատմութեան վրա այդ իրադարձութեան թողած քաղաքական եւ մշակութային հետեւանքների մասին հայագիտութեան մեջ բավական գրվել է: ԺԹ դարում, երբ հ. Ղեւոնդ Ալիշանը ձեռնամուխ եղավ Կիլիկիայի հայկական պետութեան պատմութեան համակողմանի հետազոտութեանը¹, եվրոպայում նոր էին սկսել խաչակրաց դարաշրջանի սկզբնաղբյուրների հատորավոր հրատա-

* Համառոտ տպագրված տե՛ս Պատմա-բանասիրական հանդես, 2006, № 1, էջ 309-319, 2007, № 3, 220-230:

¹ Միտամ. համագրութիւն հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, հաւաքեալ ի Ղեւոնդեայ վ. Մ. Ալիշան, Վենետիկ, 1885.

րակուլությունը²: Այդ ժամանակ, ֆրանսիացի գիտնականներ Վիկտոր Լանգլուայի³ եւ Էդուարդ Դյուլորիեյի⁴ ջանքերով հիմք դրվեց խաչակրաց դարաշրջանի հայկական սկզբնաղբյուրների հրատարակությունն ու եվրոպական լեզուներով թարգմանությունը: Ի դարի ընթացքում, եվրոպայում այդ ուսումնասիրությունները ավելի խորացվեցին, գրվեցին համակողմանի հետազոտություններ խաչակրաց ուղևորականության վերաբերյալ, որոնց մեջ նյութն ընդհանրացնելու տեսանկյունից շրջադարձային է Ք. Սեթնի խմբագրած վեցհատոր «*A History of the Crusades*» հետազոտությունը⁵: Եթե համեմատենք համաշխարհային պատմագրության նվաճումների հետ, Ի դարի հայագիտության նվաճումներն այս բնագավառում բավական համեստ են⁶, թեպետ խաչակրաց ուղևորականության պատմությունը ուղղակիորեն է կապված Հայաստանի, հատկապես Կիլիկիայի հայկական պետության անցյալի եւ հայալեզու սկզբնաղբյուրների հետազոտության հետ: Այդ բացը հավանաբար գալիս է նրանից, որ Մերձավոր Արեւելքում տեղի ունեցած խաչակրաց ուղևորականության անդրադառնում են ժամանակակից լատին (ֆրանսիական, գերմանական, իտալական, անգլիական, իսպանական եւն.), բյուզանդական, արաբական, հայկական, ասորական, պարսկական, թյուրքական, եբրայական, վրացական, ղպտական, եթովպական, սլավոնական սկզբնաղբյուրները, որոնցից շատերը մեզանում այդ բնագավառների պատմության եւ սկզբնաղբյուրների մասնագետների բացակայության պատճառով համապատասխան ուշագրության շեն արժանացել: Խաչակրաց շրջանի պատմության խնդիրների շուրջ Ի դարում ստեղծվել է ծովածավալ մի

² Կարեւորագույն շարքերից արժե թվարկել երկուսը. Recueil des Historiens des Croisades-ը (REC) եւ Archives de l'Orient latin (1881-1884, երկու հատոր): Հիշատակվածներից առաջինը հրատարակվել է 1841-1906 թթ. ընթացքում: Այստեղ հիմնական հատոր հատկացված է արեւմտյան եւ արեւելյան (արաբական) սկզբնաղբյուրներին, երկուսն էլ հատոր՝ հունարեն, հայերեն վավերագրերին ու խաչակրաց իրավունքի հուշարձաններին: Խաչակրաց պատմության սկզբնաղբյուրների ֆրանսիական նոր շարքի հրատարակությունը շարունակվում է մինչեւ այսօր, տե՛ս Documents relatifs à l'Histoire des Croisades publiés par L'Academie des Inscriptions et Belles-Lettres, որի 18-րդ հատորը հրատարակվել է 2003 թ.: Վերջին հատորի վերաբերյալ մեր գրախոսականը տե՛ս. – «Պատմաբանասիրական հանդես», 2004, № 3, էջ 289-293:

³ Le Trésor des chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupéniens.../ Recueillis, mis en ordre et publiés pour la première fois avec une introduction historique par V. Langlois, Venise, 1863.

⁴ Տե՛ս REC, Documents Arméniens, t. I, 1869.

⁵ Գիբն հրատարակվել է 1955-1989 թվականներին:

⁶ Կատարված աշխատանքների մեջ հիշատակելի են Կ. Բասմաջյանի, Գ. Միխայելյանի, Ս. Բոունազյանի, Մ.-Ն. Քասունու, Ա. Սուխասյանի, Հր. Բարթիկյանի, Մ. Զուլայանի, Կ. Մուրաֆյանի, Ժ. Դեղեյանի, Ա. Բոզոյանի եւ այլոց հետազոտությունները:

գրականություն⁷ աշխարհի գրեթե բոլոր լեզուներով, որն էլ դժվարացրել է Հայաստանում բնագավառի հետազոտությունն ու մասնագետների պատրաստումը: Այդ դժվարությունների մեջ կարեւոր խնդիրներից է նաեւ համապատասխան գրականության պակասը Հայաստանում, առանց որի հայթայթման հնարավոր չէ բնագավառի համակողմանի հետազոտությունը: Այս բացն հաղթահարելու ճանապարհին հայագիտության համար բացառիկ նշանակություն է ստանում խաչակրաց շրջանի սկզբնաղբյուրների⁸, մասնագիտական հետազոտությունների թարգմանությունն ու մատուցումը⁹ Հայաստանի գիտական հասարակությունը, ուսանողությանն ու ընթերցողին: Հայագիտության համար այդ պատասխանատու բնագավառում իր լուծման է ներկա գրքով մատուցում Լեւոն Տեր-Պետրոսյանը, հայագետների ուշադրությունը հրավիրելով Ի դարի համաշխարհային պատմագրության մեջ Մերձավոր Արեւելքի քաղաքական փոփոխարբերություններում Կիլիկիայի հայկական պետությունը հատկացված դերին:

Երկու խոսքում հեղինակն անդրադառնում է գրքի առաջին հատորի հետապնդած նպատակին՝ հայ ընթերցողին ներկայացնել «Եվրոպական միջնադարագիտության ականավոր ներկայացուցիչների մի շարք հանրահայտ աշխատություններ, որոնք, նվիրված լինելով Բյուզանդիայի կամ խաչակրաց արշավանքների պատմությանը, միաժամանակ բազմաթիվ արժեքավոր տեղեկություններ ու վերլուծություններ են պարունակում խաչակիրների եւ հայերի հարաբերությունների մասին» (էջ 3): Գրքում թարգմանված են համաշխարհային պատմագրության դասականներ Ֆերդինանդ Շալանդոնի, Ռընե Գրուսեի, Ստիվեն Ռանսիմենի, Քենեթ Սեթոնի (Սիրարփի Տեր-Ներսեսյանի հեղինակած մա-

⁷ Ցավոք այդ գրականության միայն փշրանքներն են հասնում Հայաստան: Այս առումով հատկանշական է վերջերս լույս տեսած Ժերար Դեդեյանի գրքի մատենագիտությունը (Les Arméniens entre Grecs, Musulmans et Croisades: Etude sur les pouvoirs Arméniens dans le Proche-Orient Méditerranéen (1068-1150), Volume 2, Lisbonne 2003, p. 1341-1417), ուր բերված է հարցի պատմությանը վերաբերող գրականությունը:

⁸ Այս տեսանկյունից 1930-ական թվականներին չափազանց կարեւոր նախաձեռնություն էր իրականացնում Հովհաննես Հակոբյանը, որը եվրոպական «Ուղեգրություններ»-ի իր թարգմանած Ա. հատորում (Երեւան, 1932) ներկայացնում է Ռուբրոմի, Մարկո Պոլոյի եւ այլոց Հայաստանի նկարագրությունները: ԺԳ դարի ասորական սկզբնաղբյուրներից մեծ կարեւորություն ունի Լ. Տեր-Պետրոսյանի կողմից Ամանուն Եդեսացու Ժամանակագրության ծանոթագրված թարգմանությունը (Երեւան, 1982), իսկ արաբական սկզբնաղբյուրներից Իբն ալ-Ասիրի երկի Ա. Տեր-Ղետնդյանի թարգմանությունը (Իբն ալ-Ասիր / թարգմանություն բնագրից, առաջաբան եւ ծանոթագրություններ Ա. Տեր-Ղետնդյանի, Երեւան, 1981):

⁹ Ռ. Գրուսեի եռահատոր «Խաչակրաց պատմության» Կիլիկյան Հայաստանին առնչվող դրվագների վերապատման արդյունք է Ս. Պապիկյանի «Հայերը եւ խաչակիրները» հոդվածաշարը, որը հրատարակվել է «Հանդես Ամսօրեայ»-ի 1961-63 թթ. համարներում:

սը) խաչակրաց արշավանքներին վերաբերող աշխատություններից Կիլիկյան Հայաստանի պատմությանն առնչվող հատվածները, քանի որ «այս հրատարակությունները մինչ այժմ դուրս են մնացել Հայաստանի ընթերցող լայն հասարակության, ինչպես նաև պատմաբաններից շատերի ուշագրությունից» (էջ 4): Գնահատելով թարգմանությանը ներկայացված հեղինակների ավանդը Կիլիկիո Հայոց թագավորության պատմության հետազոտության գործում, հեղինակն ընդգծվում է Ռ. Գրուսեի բացառիկ առաքելությունը:

Ակնարկելով, որ թարգմանված հետազոտությունները ժամանակի առումով դուրսինչ հնացած են եւ չեն ներկայացնում գիտության վերջին խոսքն այս բնագավառում, Լ. Տեր-Պետրոսյանը տեղեկացնում է, որ Ֆրանսերենից եւ անգլերենից կատարված ներկա թարգմանությունները օժտել է գիտության ժամանակակից վիճակը ներկայացնող ծանոթագրություններով, որոնք հիմնականում խարսխված են հայկական սկզբնաղբյուրների եւ նորագույն գրականության հաշվառման վրա:

Ներածությունն անվանված է «խաչակրաց արշավանքները եւ Արեւելքում հիմնված լատինական պետությունները», ուր հեղինակն ընդհանուր գծերով անդրադառնում է Ֆրանսիայի Կլերմոն քաղաքում 1095 թ. սկզբնավորված շարժման գիտական բնութագրմանը, շրջանառության մեջ եղած եզրերի (խաչակրաց ռազմարշավները բնորոշող) ճշգրտմանը, ռազմարշավների ժամանակագրության հստակեցմանը: Այնուհետեւ առանձին հատվածներում անդրադառնում է խաչակրությունը ծնող պատճառների եւ նախադրյալների բնութագրմանը, մասնակիցների շահագրգռություններին, համաշխարհային քաղաքականության մեջ այդ երեւույթը ծնող դրդապատճառներին ու խթաններին, եվրոպայում շարժումը նախաձեռնողների մտադրություններին: Լեւոն Տեր-Պետրոսյանի նպատակակետերից մեկն էլ ռազմարշավների նախօրյակին եւ ընթացքում Մերձավոր Արեւելքում ստեղծված քաղաքական իրադրության բացահայտումն է խաչակրաց պետությունների պատմության լայն ֆոնի վրա: Այնուհետեւ հեղինակն ընդհանուր պատկերացում է տալիս Առաջին խաչակրաց ռազմարշավի բանակների սոցիալական կազմի, ղեկավարների ու աշխարհագրական միջավայրի վերաբերյալ, շարժում, որի ընթացքում խաչածեւել եւ Մերձավոր Արեւելքի տարբեր ժողովուրդների ճակատագրերը: Առանձին-առանձին անդրադառնում է այդ ռազմարշավի ընթացքում Մերձավոր Արեւելքում ստեղծված հիմնական պետական միավորումների (Եդեսիայի կոմսություն, Անտիոքի իշխանապետություն, Երուսաղեմի թագավորություն, Տրիպոլի կոմսություն, ինչպես նաև հետագայում ստեղծված Կիպրոսի թագավորություն) պատմությանը, իսկ վերջում փորձում է ի մի բերել «խաչակրաց արշավանքների արդյունքները»:

Ներածությունը հայերենով գրված առաջին մատչելի շարադրանքն է Կիլիկյան Հայաստանի հարեւանությունը գործած խաչակրաց պետական միավորների պատմության, ուր բազմակողմանի անդրադարձ կա նաեւ մուսուլմանական տերությունների եւ հարեւան քաղաքական միավորումների քաղաքական փոխհարաբերությունների վերաբերյալ: Առանձնահատուկ ուշադրության է արժանացել Կիլիկյան Հայաստանի եւ խաչակրաց պետությունների ամուսնական կապերը, որոնք այդ երկրների արտաքին քաղաքականության կարեւոր որոշիչներն են եղել: Այստեղ Լեւոն Տեր-Պետրոսյանը քայլ առ քայլ հիմնական գծերով ներկայացնում է Եգեսիայի կոմսության շուրջ կեսդարյա պատմությունը՝ անդրադառնալով այդ տարածքում ծվարած հայկական իշխանությունների (Թորոս Կուրոպաղատ, Գող Վասիլ, Վասիլ Տղա, Դավթուկ, Գաբրիել, Ալլիարիբ եւ այլն) եւ հարեւան սելջուկյան պետական միավորումների, լատին իշխանությունների, Բյուզանդական կայսրության միջեւ ծավալված պայքարին: Նույն չափորոշիչներով (պարամետր) հեղինակն անդրադառնում է նաեւ խաչակրաց մյուս պետությունների պատմությանը, ընդգծելով հայկական քաղաքական միավորների հետ նրանց փոխհարաբերությունների առանձնահատկությունները: Հեղինակն ուշադրություն է դարձնում հայկական սկզբնաղբյուրներում եւ գիտական գրականության մեջ Անտիոքի իշխանապետությունը բնորոշող տերմինների վրա (էջ 54-55), հպանցիկ անդրադառնում է Դաշտային Կիլիկիայի նկատմամբ Անտիոքի իշխանապետության հավակնություններին (էջ 60, 66), Անտիոքի եւ Կիլիկիայի իշխանությունների միավորման նպատակ հետապնդող Լեւոն Ա (1198-1219) Թուբինյանի քաղաքականությանը (էջ 66-68): Հատկանշական է խաչակրաց պետությունների հետ փոխհարաբերություններում ամուսնական կապերի դերի բացահայտման գործում Լեւոն Տեր-Պետրոսյանի ջանքերը: Հատկապես կարեւոր է Կիպրոսի թագավորության անկման ժամանակաշրջանի պատմության անդրադարձը, քանի որ այդ կղզու միապետներն իրենց տիրոջսաշարի մեջ էին ներառել նաեւ «Հայոց թագավոր» անվանումը, որը հետագայում փոխանցվեց Սավոյայի, ապա՝ հարավային Իտալիայի կառավարող տներին:

Ներածության վերջում Լեւոն Տեր-Պետրոսյանն անդրադառնում է խաչակրաց ռազմարշավների արդյունքներին եւ համաշխարհային պատմագրության մեջ այդ դարաշրջանի գնահատականներին, ընդգծելով Մերձավոր Արեւելքի ժողովուրդներին հասցված մշակութային, քաղաքական եւ բարոյական վնասի ահեղ իրությունը: Այստեղ կարելի էր նաեւ ընթերցողի ուշադրությունն հրավիրել խաչակրաց ձեռնարկին մասնակցած եվրոպական պետական միավորների քաղաքական եւ տնտեսական հակամարտության վրա, որը սկզբից ի վեր ներսից ջլատում էր առաջ քաշված «վեհ» գաղափարը: Հատկանշական է հատկա-

պես ջենովական եւ վենետիկյան առեւտրական հանրապետությունների անգիջում մրցակցութիւնը, որի հետեւանքները հատկապես ճակատագրական եղավ Կիրիկիայի եւ Կիպրոսի թագավորութիւնների պատմութեան համար: Խաչակրաց ռազմարշավների պատմութիւնը «լուսանցային» համարելով «պատմական հեռանկարի տեսանկյունից», Լեւոն Տեր-Պետրոսյանը կարծես թէ զանց է առնում Մերձավոր Արեւելքում տեղի ունեցող այսօրվա տեղաշարժերը: Ներածութեան մեջ, ժԲ դարի 60-ական թվականներին երուսաղեմի թագավորութեան կողմից եգիպտոսը նվաճելու ձեռնարկների մասին խոսելիս (էջ 85), կարծում ենք, արժեր անդրադառնալ Բյուզանդիայի կայսր Մանուկ Ա Կոմնենոսի եգիպտական քաղաքականութեանը, որին բավական տեղ է հատկացնում իր աշխատանքում Ֆ. Շալանդոնը¹⁰: Ավելին, գրքում պետք էր ընդգծել Բյուզանդական կայսրութեան արտաքին քաղաքական շահագրգռութիւնների խաղացած դերը, մանավանդ՝ Գեաթլի հաշտութեան պայմանագրում (1108 թ.) արձանագրված կետերի նշանակութեանը տարածաշրջանի հետագա պատմութեան վրա:

Այստեղ իհարկէ կարելի է անդրադառնալ Լ. Տեր-Պետրոսյանի մի քանի սրտացավ մոտեցումներին, որոնց նկատմամբ հայագիտութիւնը հետապնդու պետք է ավելի հետեւողական դիրքորոշում որդեգրի: Խոսքս հիմնականում վերաբերում է տերմինների օգտագործմանը՝ հատկապես Սիրիա, թուրքմեն, թուրք: Միջնադարյան հայկական սկզբնաղբյուրները Սիրիայի փոխարեն օգտագործում են Ասորիք¹¹ եզրը, որը կարծում եմ ավելի ընտանի է մեր ականջին եւ հետեւողականորեն կիրառված է հայ միջնադարյան պատմագրութեան մեջ, իսկ ինչ վերաբերում է թուրքմեն տերմինին, որով անվանվում է սելջուկ, Մերձավոր Արեւելքի նախաօսմանյան քաղաքական միավորների բնակչութիւնը, ժԳ-Ձէ դարերում տարածաշրջան ներխուժած ցեղախմբերից տարբերակելու համար կարելի էր օգտագործել թյուրք ձեւը, որը կիրառված է Ի դարի հայ պատմագրութեան մեջ եւ համահունչ է ռուս եւ օտար պատմագրութեան մեջ շրջանառութեան մեջ դրված եզրին: Հայերենին հարիր չէ նաեւ «Ձանգիդյան», «Լեւանտ» ձեւերը: Մի շարք տեղանունների եւ անձնանունների օգտագործման դեպքում կարելի էր ընթերցողի ուշադրութիւնն հրավիրել դրանց միջնադարյան հայկական տարբերակների վրա. օրինակ «Տյուրոս» = «Սուր»¹²,

¹⁰ F. Chalandon, Les Comnenes, t. II, p 535-553.

¹¹ Գրե՛ում օգտագործվում է նաեւ Ջագիրա (էջ 79 եւն.) տերմինը: Կարծում եմ՝ այս եզրերի իմաստները պետք է բացվելին ընթերցողի համար:

¹² Ելնելով Լ. Տեր-Պետրոսյանի տեղանուններից ազգանուն կազմելու սկզբունքից (Պոստիեցի, Կուրտենցի, Սենթիլցի, Մոնֆերատցի, Շամպայնացի, Իբելիմացի) պետք էր Վիլհելմ պատմիչին անվանել Տյուրոսցի եւ ոչ թէ Տյուրացի: Օգտվելով հայտեւնի ընձեռած հնարավորությունից՝ կարելի էր գրել նաեւ Կուրտենցի, Շամպայնցի, Իբելիմցի եւ այլն:

«Ռեյնալդ» = «Ռընադոտ» եւ այլն: Հեթում Կոռիկոսցու գործունեությանն անդրադարձած հեղինակներին հիշատակելիս Լ. Տեր-Պետրոսյանի ուշադրությունից վրիպել է Գոհար Կարազյոզյանի հոդվածը¹³:

Գրքում Հայ ընթերցողին են ներկայացվում ֆրանսիացի բյուզանդագետ Ֆերդինանդ Շալանդոնի «*Les Comnène: Etudes sur l'empire Byzantin aux XIe et XIIIe siècle*» մենագրության երկրորդ հատորի «Հայկական իշխանությունների կազմավորումը Կիլիկիայում. հայերը, խաչակիրները եւ Բյուզանդական կայսրությունը, Հովհաննես Կոմնենոսը եւ հայոց իշխան Լեոնը. Կիլիկյան արշավանքը» (II, էջ 93-118): «Հունական կայսրությունը եւ նրա արեւելյան հարեւանները. Թորոսի ապստամբությունը. Փոքր Ասիայի մահմեդականների առաջխաղացումը. Ռեյնալդ Շատիլոնցին Կիպրոսում. Մանուելը Կիլիկիայում եւ Անտիոքում (1159 թ.). պաշար Փոքր Ասիայի մահմեդականների դեմ (1159-1164 թ.)» (II, էջ 417-455) հատվածները: Ֆ. Շալանդոնի մոտեցումներն ավելի ամբողջական կլինեին, եթե թարգմանվեր նաեւ ֆրանսիացի պատմաբանի գրքի 527-533 էջերը, ուր խոսվում է Բյուզանդիայի եւ Կիլիկյան Հայաստանի 1159-1180 թթ. փոխհարաբերությունների վերաբերյալ:

Ռընե Գրուսեի «*Histoire des croisades et du royaume France de Jerusalem*» եռահատոր մենագրությանից թարգմանված են Բագրատունյաց թագավորության անկումից հետո Փոքր Ասիայում եւ Հյուսիսային Ասորիքում ստեղծված հայկական ռազմաքաղաքական միավորումների (Ֆիլարտոս, Թորոս Եդեսացի, Գող Վասիլ, Տղա Վասիլ եւ այլն), Հայոց կաթողիկոսության, Ռուբինյան իշխանության եւ թագավորության ԺԱ-ԺԳ դդ. պատմությանն առնչվող հատվածները (I, էջ XL-XLIV, LVIII-LX, 43-68, 378-381, 388-394, 435-439, 442-443, 454-456, 472-476, 489-494, 589-594, 671-673, II, էջ 50-53, 86-88, 176-178, 195-196, 198-201, 291-292, 305, 332-335, 399, 408-410, 474-475, 566-569, 580-583, 602-604, 683-684, 696-697, III, էջ 15-16, 127-133, 194-195, 246-270, 363-366, 515-516, 526-529, 611-637, 695-696, 699-701, 726-727), ուր համաշխարհային պատմության հետնախորքի վրա լուսաբանվում են Մերձավոր Արեւելքի իրադարձությունները:

Ռընե Գրուսեի «*L'empire du Levant: histoire de la question d'Orient*» գրքից թարգմանվել է Փոքր Հայաստանը (Կիլիկիա) հատվածը (էջ 385-416), որը բաղկացած է երկրի քաղաքական պատմությանն (Տավրոսի բնակեցման սկիզբը, Ռուբինյան տոհմի սկզբնավորումը, բյուզանդացիների

Կարծում եմ՝ անձնանունների եւ տեղանունների հայացման այս ուսանելի մոտեցումը կշարունակվի նաեւ հետագայում:

¹³ Գ. Կարազյոզյան, Հեթում պատմիչը եւ միջնադարյան ֆրանս-հայկական գրական կապերը. – Հայ գրականության միջազգային կապերը, 2, Երեւան, 1987, էջ 5-20:

վերջնական վտարումը, Լեւոնի գահակալությունը, Հեթումյան դինաստիա, Լուսինյան հարստություն) ու հաստատություններին եւ քաղաքակրթությանը (Հայոց թագավությունն ու ֆրանկների ազդեցությունը, Հայկական հակազդեցությունը ֆրանկականացման դեմ, Հայոց եկեղեցին Ռուբինյան շրջանում, Հայոց եկեղեցին, Բյուզանդիան եւ Սուրբ Աթոռը, Կիլիկիո Հայոց թագավորությունը եւ Լեւանտի առեւտուրը) նվիրված բաժիններից:

Մտիվեն Ռենսիմենի քաջածանոթ «A History of the Crusades» եռհատոր մենագրությունից թարգմանվել է «Հայկական միջնաբերդ» հատվածը (հ. Ա, էջ 195-212), իսկ Քենեթ Սեթոնի «A History of the Crusades» գրքից Սիրարփի Տեր-Ներսեսյանի «Կիլիկյան Հայաստանի թագավորությունը» հոդվածը:

Թարգմանությունների արժեքը մեծացնում են Լ. Տեր-Պետրոսյանի ծանոթագրությունները, ուր հայկական սկզբնաղբյուրների ու նորագույն գրականության օգտագործմամբ վերանայված են դարաշրջանի պատմության մի շարք դրվագներ եւ հայագետների ուշադրությունն է հրավիրված ժԱ-ԺԳ դդ. Մերձավոր Արեւելքի պատմության նորովի մեկնաբանության արժանի խնդիրների վրա:

Գիրքն ունի երկու հավելված, որոնցից մեկն անվանված է «Որոշ նկատառումներ Սամուել Անեցու ժամանակագրության վերաբերյալ», իսկ մյուսը ներկայացնում է «Սամուել Անեցու մի նորահայտ շարունակողի ժամանակագրական ցանկը»: Աշխատանքի այս հատվածը եւս ուշագրավ է, քանի որ հրապարակվում է Կիլիկիայի պատմությանը վերաբերող նոր սկզբնաղբյուր:

Վերջում բերվում է օգտագործված գրականության, անձնանունների եւ տեղանունների ցանկեր, Լատին Արեւելքի, Եգեպիայի, Անտիոքի, Տրիպոլիի, Երուսաղեմի, Կիպրոսի եւ Կիլիկիայի պետությունների պատմական քարտեզներ:

Գրքի ցանկերը կատարված են արտակարգ խնամքով, թեպետ կարելի էր ավելի ռացիոնալ դարձնել դրանք: Նույն անվանման առանձին տարբերակները ցանկում երբեմն առանձին միավոր են, երբեմն՝ տարբեր: Օրինակ՝ Գաստոն (Գաստին, Գաստուն)-ը մեկ միավոր է, իսկ Գամասկոս (Դմշկ, Դմըշխ), Հոմմիլա (Կլայ, Ռանկուլաթ) տեղանունները նաեւ առանձին միավորներ են: Պետք է հատուկ ընդգծել Լ. Տեր-Պետրոսյանի մեծ ներդրումը հայագիտության մեջ խաչակրաց ժամանակաշրջանի անձնանունների եւ տեղանունների ունիֆիկացված տարբերակներ ստեղծելու գործում:

Աշխատանքն աչքի է ընկնում պարզ, սակայն հագեցված շարադրանքով: Լեզվի առումով այն լավ խնամված է:

Լեւոն Տեր-Պետրոսյանը կատարում է երկու տարի առաջ տված խոստումը եւ հայագիտության դատին է հանձնում «Խաչակիրները եւ հայերը» ընդհանուր խորագրով հետազոտության երկրորդ հատորը:

Եթե գրքի առաջին հատորում հիմնականում ներկայացված էին Ի դարի Արեւմտյան գիտական գրականության մեջ Կիլիկիայի հայկական պետության պատմությանը անդրադարձած հեղինակների հայերեն թարգմանված երկերը, ապա ներկա աշխատությունը ներկայացնում է մի համապարփակ հետազոտություն, ուր հեղինակն իր առջեւ խնդիր է դրել հետազոտել բազմաբնույթ սկզբնաղբյուրների տեղեկությունները Կիլիկյան Հայաստանի պատմության ուսումնասիրության երկու հիմնական բնագավառներում. գահաժառանգության կարգ եւ իշխանության «լեգիտիմության» (օրինականության) դրսեւորումներ:

Առաջաբանում հեղինակն ընդգծում է Կիլիկյան Հայաստանի եւ Արեւելքում հիմնված խաչակրաց պետությունների տիպաբանական ընդհանրությունները, փորձում է բնորոշել «միջազգային իրավունք» հասկացությունը ժԱ-ԺԳ դարերի ընկալումներով: Անդրադառնում է տարածաշրջանում հավակնություններ ունեցող գերտերությունների ու քաղաքական գործոնների (Բյուզանդիա, Արեւմտյան Եվրոպա, Իսլամական հասարակապետություն, մոնղոլներ) հավակնություններին եւ քաղաքական նկրտումներին: Լ. Տեր-Պետրոսյանը Բյուզանդիայի աշխարհակալական ձգտումները համադրում է Արեւմտահռոմեական (այն է Գերմանական) կայսրության նմանատիպ դիրքորոշմանը: Այս երկու տերությունները վիճարկում էին «հռոմեական կայսրության ժառանգորդն ու քրիստոնյա աշխարհի գերական» լինելու մենաշնորհը: Այդ իսկ պատճառով հեղինակը բանաձեւում է հիշատակված երկու կայսրություններում եկեղեցու կարգավիճակը մինչեւ ժԱ դարը եւ դրանից հետո, անդրադառնում է Հռոմի պապական աթոռի նկրտումների նկատմամբ հայկական սկզբնաղբյուրների վերաբերմունքին: Տարածաշրջանի քաղաքական պատկերն ամբողջացնելու տեսանկյունից ներկայացնում է նաեւ իսլամական հասարակապետության դիրքորոշումը եւ գործելակերպը Մերձավոր Արեւելքում, սուլթանի ու խալիֆի ինստիտուտների փոխհարաբերությունը, անդրադառնում է սրբազան պատերազմի (չիհաղ) նշանակությանը մուսուլմանի առօրյա կյանքում, Զիմմի ազգաբնակչության (քրիստոնյա եւ հրեա) կարգավիճակին, իսլամական աշխարհակալության սկզբունքներին ու ընկալմանը: Մոնղոլների «տիեզերակալական

գաղափարախոսությունը»¹⁴ հեղինակը համարում է «գործնական առումով» ամենահիմնավորվածը. «Այսպիսի պատկերացման շրջանակում չէր տեղավորվում ոչ միայն թշնամական, այլև նույնիսկ դաշնակից պետությունների գոյությունը, քանի որ դաշինքը կողմերի հավասարություն էր ենթադրում» (էջ 19), հանգամանք, որը նկատել է նաև միջնադարյան հայ պատմագրությունը: Ահա նման միջազգային ուժերի եւ քաղաքական դաշտի ազդեցության ներքո էր գոյատեւում Մերձավոր Արեւելքը ժԱ-ԺԴ դդ., երբ տարածաշրջանում իր պատմական դերն էր ստանձնել Կիլիկիայի հայկական պետությունը: Գրքի այս մասում փոքր ինչ բացարձակացված է այն հանգամանքը, որ թե՛ խաչակիրները, եւ թե՛ հայերը իրենց պետությունները ստեղծել են «օտար ժողովուրդներից նվաճված տարածքներում» (էջ 5): Եթե այս դրույթը հիմնավորված է խաչակրաց պետությունների պարագայում, ապա Կիլիկիայի հայկական պետության դեպքում այդ մոտեցումը, կարծում եմ, իրեն չի արդարացնում. Կիլիկիային տեր դարձած հայկական զինվորական ուժերը նվաճողներ չէին, նրանք տարածաշրջանում հայտնվել էին պատմական անհրաժեշտության բերումով, Բյուզանդիայի եւ սելջուկյան ռազմարշավների ռազմաքաղաքական ճնշման հետեւանքով: Սկսած ժ դարից Բյուզանդիան բռնության եւ դիվանագիտական համոզման ճանապարհով Մեծ Հայքի տարածքից տեղահան էր անում հայկական բնակչության մի նշանակալի զանգված իր քաղաքական եւ եկեղեցական կառույցներով ու բնակեցնում Կապադովկիայում, Կիլիկիայում, Հյուսիսային Ասորիքում: Մի կողմից կայսրությունը փորձում էր օգտագործել նրանց ռազմական ուժը ոչ վաղ անցյալում վերագրված սահմանների ամբողջականությունը պաշտպանելու համար, մյուս կողմից էլ ժԱ դ. երկրորդ կեսին սելջուկ-թյուրքերի ռազմարշավների հետեւանքով նույն Բյուզանդիայից նվաճված փոքրասիական նահանգներում եւ Հյուսիսային Ասորիքում, հրոսակների տարերային ներխուժումների հետեւանքով ստեղծվել էր անիշխանական վիճակ, քաղաքական վակուում եւ քաոս, որը կարողացան իրենց օգտին աշխատեցնել Բագրատունյաց Հայաստանի կործանումից հետո Կիլիկիայում եւ Հյուսիսային Ասորիքում հաստատված հայկական ռազմաքաղաքական ուժերը¹⁵: Այս առումով անհնար է հավասարման նշան դնել խաչակիրների եւ Կիլիկիայի հայկական իշխանությունների գործելակերպերի ու քաղաքական նպա-

¹⁴ Մոնղոլական հսկայածավալ կայսրությունում իշխանության լեգիտիմության խնդիրը ֆինանսվում է նաև գերմանացի հետազոտող Թ. Նագելը տե՛ս **Тильман Хагелъ**, Тимур-завоеватель и исламский мир позднего средневековья / Перевод с немецкого Ясинской Л. И., Ростов-на-Дону, 1997, с. 65-74, 87-96.

¹⁵ Այդ մասին տե՛ս նաև Ա. Ա. Բոզոյան, Բյուզանդիայի արեւելյան ֆաղափականությունը եւ Կիլիկյան Հայաստանը ժԲ դարի 30-70-ական թվականներին, Երեւան, 1988, էջ 52:

տակադրումների միջեւ: Այլ բան է, որ Կիլիկիայի հայկական պետությունը հետզհետե երկրի կառավարման համակարգը նմանեցրեց Խաչակրաց պետությունների կարգավիճակին: Անդրադառնալով Կիլիկիայի հայկական պետության քաղաքական դաշտում իրար հաջորդող 13 հարեաններին (էջ 21-22) կարելի էր նաեւ հիշատակել Օշինյան իշխանության, Եդեսիայի Թորոս իշխանի, Արտուքյան ամիրայության, Մեծ Մոնղոլների խանության, Երուսաղեմի եւ Կիպրոսի խաչակրաց թագավորությունների անունները, որոնք կարելու էր դերակատարություն են ունեցել Թուրքիայանների ստեղծած պետության քաղաքական կյանքում իբրեւ սահմանակից երկրներ: Հիշատակված պետությունների եւ քաղաքական միավորումների հոսունությունը, ինչպես արգարացիորեն նկատում է հեղինակը, «անհնար էր դարձնում քաղաքական հաշվարկների վրա կառուցված երկարատեւ ռազմավարության գործադրումը» (էջ 22): Դրանով է բացատրվում այն պարագան, որ «Հակամարտող կողմերի երկարատեւ շահերը կարճատեսորեն ստորադասվում էին պահի թելադրանքով ակնկալված ձեռքբերումներին», որով միջպետական փոխհարաբերություններում տիրապետող էր դառնում «չունգվիների օրենքը» (էջ 22): Մեծ տերությունները կիրառելով «բաժանիր, որ տիրես սկզբունքը», փորձում էին փոքր պետություններին պահել իրենց սատելիտների ծիրում, տարածաշրջանում չէր գործում նույնիսկ «կրոնական համերաշխության գիտակցությունը» (էջ 25): Խոսելով քառասյին թվացող այս վիճակի մասին, Լ. Տեր-Պետրոսյանը տարածաշրջանի փոքր պետությունների երկարակեցության պատճառը տեսնում է «գերտերությունների հակասությունների եւ ապա՝ փոքր պետությունների ուժերի հավասարակշռության ոլորտում» (էջ 27): Կիլիկիայի հայկական պետության կենսունակության վճռորոշ գործոն համարելով հայկական բնակչության միատարր լինելը եւ մեծամասնություն կազմելը (էջ 29)¹⁶, ի տարբերություն խաչակրաց պետությունների, հեղինակը իրավամբ մեծ տեղ է տալիս Կիլիկյան պետության մեջ ազգային ինքնագիտակցության դրսևորման փաստերին (էջ 30-31), հիմնախնդիր՝ որի բազմակողմանի հետազոտությունը կարող է նոր հորիզոններ բացել տարածաշրջանի պատմության ուսումնասիրության ասպարեզում: Բազմաթիվ հարցադրումների այս նոր ու թարմ հոլովույթում Լ. Տեր-Պետրոսյանը կարելու է տեղ է հատկացնում գահաժառանգման հստակ կարգի առկայության հետազոտությանը: Մանավանդ, որ հեղինակն իրեն հետաքրքրող դարաշրջանի մասին խոսող սկզբնաղբյուրների բազմաշերտ հանքում հայտնա-

¹⁶ Ցավով, Կիլիկիայի հայկական իշխանության եւ պետության սահմաններում դեմոգրաֆիկ գործընթացների հետազոտությունը դուրս է մնացել հայագետների ուշադրությունից: Լ. Տեր-Պետրոսյանի գիրքը նոր խթան կարող է հանդիսանալ հարցի հետետղական ուսումնասիրության համար:

բերել է դեռևս անմշակ մի շերտ, որը ցայսօր չի արժանացել միջնադարագետ-հետազոտողների ուշագրությունը: Պիտի շեշտել ներկա ուսումնասիրության հատկապես քաղաքագիտական նշանակությունը, որը բխում է հեղինակի փորձառության հսկայական պաշարից եւ ուղեկցվում է աղբյուրագիտական նուրբ կառուցումներով:

Բուն աշխատությունն անվանված է «Գահաժառանգության իրավունքը եւ իշխանությունը "լեգիտիմությունը" Կիլիկյան Հայաստանում»: «Նախագիտելիքին» հաջորդում են առանձին գլուխներ, որոնք նվիրված են Կիլիկյան Հայաստանում գահակալած բոլոր Ռուբինյան իշխաններին եւ թագավորական գահին բազմած միապետներին: «Նախագիտելիք»-ում բերվում են մերօրյա պատմագրության կողմից արժարժված նկատառումներն ու առաջարկված լուծումները, Սմբատ Սպարապետի «Դատաստանագրք»-ում առկա գահաժառանգման եւ գահազրկման խնդիրներին վերաբերող համապատասխան դրույթներն ու կանոնները, ներկայացնում է միջնադարյան սկզբնաղբյուրներում հարցի քննարկման հիմնական հայեցակարգը: Լ. Տեր-Պետրոսյանը գրքի հետապնդած հիմնական նպատակը ձեւակերպում է հետեւյալ նախադասությամբ. «Մեզ հետաքրքրողը տվյալ դեպքում ոչ թե գահաժառանգման իրավունքի տեսությունն է, այլ նրա գործնական կիրառումը Կիլիկյան Հայաստանում, ինչը բնականաբար պահանջում է առանձին-առանձին դիտարկել Կիլիկիո բոլոր իշխանապետերի եւ թագավորների գահակալման հանգամանքները» (էջ 44): Այս բացատրությունից իսկ հստակ է դառնում, թե որքան կարեւոր է խնդիրը Հայոց պետական իրավունքի հետազոտության տեսանկյունից, մի նոր հարցադրում, որը առաջ է քաշում միջնադարագետ աղբյուրագետ պատմաբանը, հետազոտության ծիրի մեջ ներքաշելով ոչ միայն հայոց իրավունքի, այլ նաեւ քաղաքական մտքի ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետներին: Այնուհետեւ հեղինակը ներկայացնում է թագավորի ինստիտուտի էությունը խնդրին անդրադարձած կիլիկյան շրջանի կարեւորագույն սկզբնաղբյուրները. Վահրամ Բաբունու «Բան ի Յայտնութիւն Տեառն» եւ Հովհաննես Երզնկացու «Ի բանն առաքելոյ» ճառերը, որոնց հետազոտությունը նոր ուղիներ է մատնանշում զարգացած միջնադարի հայոց պետական իշխանության եւ նրա ինստիտուտների ուսումնասիրության բնագավառում: Հետազոտության այս մասում հաճախ հիշատակվող Հովհաննես Երզնկացու երկը դեռևս հրատարակված չէ, եւ Լ. Տեր-Պետրոսյանը, օգտագործելով ձեռագիր ընդօրինակությունը, կարծես մղում է բնագրագետ-աղբյուրագետներին ձեռնամուխ լինել այդ երկի բնագրի հրատարակմանը:

Անցնելով իրեն հետաքրքրող բուն նյութի քննարկմանը՝ հեղինակը լայն աղբյուրագիտական հենքի վրա ուշագրություն է հրավիրում Կիլիկիայի հայ-

կական իշխանություն կառավարողներին՝ Ռուբինյան իշխանական տան անդամների կողմից գահին տիրելու օրինաչափությունների (լեգիտիմություն, ժառանգի ընտրություն) վրա: Անդրադառնալով Ռուբեն Ա-ի գործունեության մասին խոսող սկզբնաղբյուրների վկայությունների եւ մասնագիտական գրականության մեջ առկա տեսակետների քննարկմանը, հեղինակը վերստին անդրադառնում է Ռուբինյան առաջին իշխանի պատմականության խնդրին: Այս առումով ուշագրավ է հեղինակի այն պնդումը, որ Սամուելի հրապարակված «ժամանակագրություն» բնագրում առկա տեղեկությունների մի մասը հետսամուտ են եւ քաղված են ժԳ դարի յուրահատուկ շրջանակի աղբյուրներից (Վահրամ Բաբունի «Ոտանաւոր պատմութիւն Ռուբինեանց», Հեթում արքայորդու Ճաշոցի հիշատակարան, Հեթում Կոռիկոսցու «Պատմութիւն ազգին Ռովբինանց» եւ Հեթում Թագաւորի «Պատմութիւն»): Այստեղ, իհարկե պետք է շեշտվեր նաեւ, որ ժԲ դարի բազմաթիվ իրադարձությունների համար Սամուելի երկը կա եւ մնում է տարածաշրջանի պատմության կարեւորագույն սկզբնաղբյուր. գործրինակ՝ Գրիգոր Գ Պահլավունու կողմից Կաթողիկոսական աթոռը Անի տեղափոխելու մասին ծրագիրը: Սամուել Անեցու երկում Ռուբեն Ա իշխանի եւ առաջին կրիկյան իշխանների մասին տեղեկությունների հետսամուտ լինելը կարծում եմ դեռեւս չի նշանակում, որ մենք առասպել պետք է համարենք Ռուբենի պատմական անձնավորություն լինելու ժԲ-ԺԳ դարի հայալեզու եւ օտար հեղինակների վկայությունները: Ռուբենի եւ Կոստանդինի գործունեությանը անդրադարձած ժԲ դ. սկզբնաղբյուրների աղքատությունը առաջին հերթին խոսում է այն մասին, որ ժԲ դարի սկզբին դեռեւս ձեւավորված չի եղել Ռուբինյան պաշտոնական պատմագրական ավանդույթը, քանի որ հայկական օչկումենեյում բազմաթիվ իշխանություններ էին հավակնում առաջինը լինելու պատվին: Այդ է նաեւ պատճառը, որ Հայոց կաթողիկոսարանը ազգային ուժերը չչլատելու միտումով խուսափում էր աթոռը հաստատել որեւէ հայկական իշխանության տարածքում:

Հեղինակը շեշտում է, որ Կոստանդինի ինքնության վերաբերյալ թեպետ հայկական սկզբնաղբյուրները պնդում են Ռուբենի որդին լինելու հանգամանքը, այնուամենայնիվ Մատթեոսի եւ Սմբատի պատմագրական երկերում, ասորական պատմագրության մեջ ու հունարենով պահպանված կնիքների վրա Թորոսն ու Լեւոնը եւս անվանվում են Ռուբենի որդիներ (կամ Ռուբինյաններ): Այս փաստերից ելնելով՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը գալիս է այն համոզման, որ արդեն ժԱ դարի վերջին եւ ժԲ դարի սկզբին Ռուբեն անունն արդեն դիտվում էր իբրեւ տոհմանուն, իսկ քանի որ հայտնի է, որ Կոստանդինի մեծ որդու անունը Թորոս է, հետեւելով Ն. Ադոնցին եւ Ռուբինյան ու Հեթումյան ընտանիքների տոհմագրությանը, ենթադրում է, որ Կոստանդինի հոր անունը եւս կարող էր Թորոս

լինել: Խնդիրը թեպետ մնում է կնճռոտ, սակայն մեծ կարեւորություն ունի Ռուբինյան իշխանության պատմության ուսումնասիրողների համար: Նկատելով, որ «Ռուբինյանների Կիլիկիա մուտք գործելու պահին այդ երկրի մի զգալի մասին *de jure* Բյուզանդական կայսեր անունից, բայց *de facto* լիովին անկախ, տիրում էր Փիլարտոս անունով հայ գորավարը», հեղինակը կատարում է քաղաքագիտական հետաքրքիր դիտարկում. «Բյուզանդիան հանդուրժում էր իրերի այդ դրուծվածը, քանի որ մի կողմից՝ կարողություն չունեի միջամտելու հեռավոր այդ երկրամասի գործերին, մյուս կողմից՝ թերեւս սպասելով բարեպատեհ ժամանակների, միառժամանակ իրեն բավարարված էր ձեւացնում Փիլարտոսի թեկուզ ձեւական հպատակության ցուցադրությամբ: Բացառված չէ, որ առկա էր նաեւ քաղաքական հաշվարկը. Փիլարտոսի պետությունն այնուամենայնիվ ինչ-որ չափով թուլացնում էր թուրքերի ճնշումը կայսրության փոքրասիական տիրույթների վրա» (էջ 83): Կիլիկիայում լեգիտիմ իշխանություն հաստատելու տեսանկյունից, կարծում եմ, կարելի էր նաեւ քննարկել սկզբնաղբյուրների վկայությունները Փիլարտոսի կողմից իսլամի ընդունման եւ սելջուկյան պետության գերակայությունն ընդունելուն նպատակաուղղված քայլերը, մանավանդ այն բանից հետո, երբ Իկոնիայի սուլթան Սուլեյման իբն-Կութուկմիշը սկզբում ամբողջովին շրջափակման մեջ առավ, իսկ ապա նվաճեց տարածաշրջանը: Պակաս ուշագրավ չէր լինի նաեւ Ապլղարիպ Արծրունու եւ նրա փեսա Օշին Հեթումյանի իշխանությունների լեգիտիմության քննարկումը Ռուբինյան հայկական իշխանության քաղաքական կայացման տեսանկյունից, քանի որ Օշինի հետնորդները եւս Կիլիկիայի պատմության ողջ ընթացքում փորձում էին լեգիտիմացնել սեփական իշխանությունը: Այս առումով հայագիտության մեջ դեռեւս հստակ չէ սկզբնաղբյուրներում հիշատակվող Նաթանայելյան եւ Հայկազունի տների գերակատարությունը հիշյալ գործընթացում, ինչպես որ Բազունիների պարագայում իրավացիորեն մատնանշում է Լ. Տեր-Պետրոսյանը (էջ 85): Մեր կարծիքով՝ այստեղ պետք է կարեւորվեր նաեւ այն հանգամանքը, թե ֆեոդալական մրցակցության ինչպիսի՞ պայմաններում էին Ռուբինյանները կերտում իրենց պետության հիերարխիկ եւ վարչակառավարման համակարգերը, ԺԱ դարի վերջում Կիլիկիայում եւ Հյուսիսային Ասորիքում ստեղծված ժամանակավոր քաղաքական վակուումը ինչպե՞ս էր նպաստում կամ խանգարում Կիլիկիայում հայկական միասնական իշխանության ստեղծմանը:

Թորոս Ա-ի (1100-1129) իշխանության ժամանակաշրջանից սկսած սկզբնաղբյուրների վկայությունները հետզհետե ավելի ստույգ են դառնում եւ թույլ են տալիս հետազոտողին իր տեսակետները կառուցել տեղեկությունների ավելի ամուր հողի վրա: Այստեղ հեղինակն իրավացիորեն ընդգծում է, որ

ժամանակի բազմալեզու սկզբնաղբյուրները Կոստանդինի մահից հետո իբրեւ հավասարազոր իշխաններ են համարում Թորոս Ա-ին եւ Լեւոն Ա-ին (էջ 88-91): Մեր կարծիքով՝ նման կացությունը *de jure* բնույթ կարող էր ստանալ միայն Դեաբոլի պայմանագրից հետո: Լեւոնի նկատմամբ Թորոսի գերակայության մասին փաստարկները կարող են խոսել այն մասին, որ թեպետ բյուզանդական իշխանությունները ճանաչել են երկու եղբայրների հավասարազորությունը իրենց պետության առջեւ, սակայն ըստ հայկական ժառանգական իրավունքի գործել է նաեւ Թորոսի առաջնածնության գաղափարը: Հոր կողմից երկու որդիների միջեւ իշխանության բաժանման վարկածը առկա սկզբնաղբյուրների վկայություններով անհնար է հիմնավորել, այլ բան է, եթե ենթադրենք, որ տվյալ պարագայում գործում է «բաժանիր, որ տիրես» դարերի մեջ փորձված բյուզանդական քաղաքական գիծը: Այս տեսանկյունից հատկանշական է, որ ժԲ դարի 50-ական թվականներին բյուզանդացիները «սեբաստոս» պատվանունով պատվում էին ոչ միայն Ռուբինյան իշխան Թորոս Բ-ին, այլ նաեւ Հեթումյան իշխան Օշինին¹⁷: Թորոսի կողմից սեբաստոս տերմինի օգտագործումն իսկ արդեն ցույց է տալիս, որ նա իր իշխանությունը պատկերացնում է բյուզանդական քաղաքական ազդեցության ծիրում: Ինչ վերաբերում է Աննա Կոմնենեի երկում օգտագործված *ἄνθρωπος* տերմինին, ապա այն ժամանակի սկզբնաղբյուրներում անկասկած կախվածություն է մատնանշում¹⁸:

Իրավացի է Լ. Տեր-Պետրոսյանը, երբ հակադրվում է Վ. Ռուզ-Կոլենբերգի տեսությունը, ըստ որի իշխանության անցումը Թորոս Ա-ից Լեւոն Ա իշխանին «մահմեդական սովորույթի ազդեցության արտահայտություններից է հայ իրականության մեջ» (էջ 101-105): Օրինական ժառանգի բացակայության պայմաններում իշխանության անցումը մերձավորագույն արյունակցին ընդունված պրակտիկա է թե՛ մուսուլմանական եւ թե՛ քրիստոնեական աշխարհում: Սակայն այստեղ Լ. Տեր-Պետրոսյանը, հակադրվելով իր իսկ կողմից հմտությամբ շրջանառության մեջ դրված փաստին¹⁹, այնուամենայնիվ հարցականի տակ է դնում ակնհայտը՝ Թորոս Ա-ի Կոստանդին որդու սպանության պարագան (էջ 102-104): Չեմ կարծում, թե թագավորական իշխանության լեգիտիմությունը շեշտող եւ ջատագովող ԺԳ դարի երկրորդ կեսի հեղինակները փաստեր բերե-

¹⁷ Հեթումյաններին սեբաստոս տերմինով պատվելու վկայությունները հայտնի են նաեւ Լ. Տեր-Պետրոսյանին (էջ 99, ծան. 59): ԺԲ դարի ընթացքում Կիլիկիայի թե՛ Ռուբինյան եւ թե՛ Հեթումյան իշխանները կաբետում էին սեբաստոսության պատվի ստացումը բյուզանդական իշխանությունների կողմից (էջ 100):

¹⁸ Տե՛ս Ա. Կաժդանի հանրագիտարանային հոդվածը (The Oxford Dictionary of Byzantium, volume 1, New York, Oxford, 1991, p. 111):

¹⁹ Նկատի ունեմ Ղ. Ալիշանի («Սխտան», էջ 239) հրապարակած Անավարգայի եկեղեցու արձանագրությունը:

ին, որոնք, չհամապատասխանելով պատմական իրականությանը, ակամա հակասել են իրենց իսկ ստեղծած քաղաքագիտական տեսությունը եւ կառուցումներին:

Քննարկելով Լեւոն Ա-ի իշխանավարության շրջանում՝ 1136/7 թ., նրա որդիների միջեւ ծագած գժտության դեպքին՝ Լ. Տեր-Պետրոսյանը շարունակում է հավատարիմ մնալ իր որդեգրած սկզբունքին. ճշտել սկզբնաղբյուրների վկայությունների հավաստիությունը, անդրադառնալ մերօրյա պատմագիտական գրականության հիմնական մոտեցումներին եւ լուծումներին, փորձել խնդիրը պարզաբանել գահաժառանգման կարգի իրավական դաշտի պատմաքաղաքագիտական շրջանակներում: Այստեղ կարելի էր արձանագրել Կիլիկյան Հայաստանում լեգիտիմության համար պայքարի մի կարեւոր արձագանք եւս. եւ՛ Թորոս Ա-ը, եւ՛ Լեւոն Ա-ը իրենց որդիներին Կոստանդին անունն են տվել: Արդյոք սա չի՞ նշանակում, որ երբայրների միջեւ իշխանության համար պայքարը սկսվել է շատ վաղուց եւ ինքնաբերական անցել է նրանց հետնորդներին²⁰: Անցնելով Լեւոն Ա-ին սկզբնաղբյուրներում տրված բյուզանդական տիտղոսների նշանակության բացահայտմանը՝ հեղինակն իրավացիորեն ենթադրում է, որ մինչեւ Թորոս Ա-ի մահը Լեւոն Ա-ը «թեկուզ ստորակալի կարգավիճակով, կիսել է իշխանությունը իր եղբոր հետ» (էջ 110): Ընթերցողն ակնկալում էր, որ Լ. Տեր-Պետրոսյանը կանդորագառնա Հովհաննես Ա Կոմնենոսի կիլիկյան ռազմարշավի կազմակերպմանը առիթ ծառայած բյուզանդական կողմի առաջ քաշած ամենածանրակշիռ մեղադրանքին՝ Լեւոն Ա-ը մերժել է բյուզանդական կայսրության գերակայությունը եւ իրեն թագավոր է հռչակել²¹: Խնդիր, որն առաջին հերթին պահանջում էր քաղաքագիտական լուծում եւ պահանջում է միջազգային փոխհարաբերությունների ու հայկական իշխանության կայացման կամ լեգիտիմության տեսանկյունից նորովի քննարկում:

Թորոս Բ-ի կողմից Կիլիկիայի հայկական իշխանության վերականգնման պատմական սկզբնաղբյուրների աղբյուրագիտական հետազոտությունը մեր կարծիքով թույլ է տալիս նրա քաղաքական ակտիվ գործունեությունը տանել

²⁰ Այս առումով, մեր կարծիքով, ուշագրավ է, որ Սմբատի տարեգրության համառոտ տարբերակներում եւ Սամուելի ժամանակագրության մեջ Կոստանդին Ա-ի կրտսեր որդու՝ Լեւոն Ա իշխանի (1129-1137) գավակներից մեկի անունը եւս Կոստանդին է (տե՛ս Ա. Բոզոյան, Բյուզանդիայի արեւելյան ..., էջ 95), թեպետ սկզբնաղբյուրները մատնանշում են նրա անօրինական ամուսնության պտուղ լինելու հանգամանքը: Պատմագրության համար պակաս կարեւոր չէ նաեւ այն հանգամանքը, որ Թորոս Ա իշխանի միակ ժառանգին Վահրամ Բաբունին անվանում է Կոստանդին (տե՛ս Ա. Բոզոյան, Բյուզանդիայի արեւելյան ..., էջ 80): Այս հանգամանքը եւս մեկ փաստարկ կարող է լինել երկու եղբայրների ժառանգական մրցակցության մասին, որին անդրադառնում է Լ. Տեր-Պետրոսյանը (էջ 88 եւ հետ.):

²¹ Հր. Բարթիկյան, Միխայել Իտալիկոսի «Ներբողյանը» եւ Կիլիկիայի հայոց առաջին թագավորի խնդիրը. – «Պատմա-բանասիրական հանդես», 1984, № 4, էջ 216-220:

երկրորդ խաչակրաց ռազմարշավի ժամանակները: Դրա համար կարող է անուղղակի փաստ ծառայել նաեւ այն հանգամանքը, որ Ինաբի ճակատամարտին (1149 թ.) եւ նրան հաջորդող իրադարձություններին, որին մասնակցում են Փոքր Ասիայի եւ Հյուսիսային Ասորիքի գրեթե բոլոր շահագրգիռ քաղաքական ուժերը, կիլիկյան հայկական իշխանության գոյության մասին սկզբնաղբյուրներում (հատկապես Գրիգոր Երեցի մոտ) ակնարկ չկա²²: Թեպետ Թորոս Բ-ի բուն քաղաքական գործունեությունը եւ հատկապես Անտիոքի իշխան Ռեյնալդ Շատիլոնցու հետ Կիպրոսի գրավումն ու ավարառումը կարող էին լուրջ առիթ ծառայել Մանուել Ա Կոմնենոս 1158/9 թթ. ռազմարշավի համար, սակայն այդ ձեռնարկի հիմնական պատճառը, մեր կարծիքով, Բյուզանդական կայսրության ուժի ցուցադրումն էր Հալեպի աթաբեկությանը եւ Մերձավոր Արեւելքի քաղաքական ուժերին: Այդ է պատճառը, որ արշավանքի ընթացքում լուրջ գործողություններ չարձանագրվեցին Կիլիկիայի հայկական իշխանության եւ Անտիոքի լատին իշխանությունների նկատմամբ: Բյուզանդական մեծաթիվ բանակի առկայության պայմաններում այդ իշխանություններն ընդունեցին կայսրության գերակայությունը: Հատկանշական է, որ Գրիգոր Երեցի դեպքերին ամենամոտը կանգնած ժամանակագրի վկայությամբ, Թորոս Բ-ը բյուզանդական հիշյալ ռազմարշավից հետո է միայն հիշատակվում «պանսեւաստիոս» տիտղոսով²³:

Ռուբեն Բ եւ Մլեհ իշխանների բաժնում հայագիտության տեսանկյունից էական նվաճում է հեղինակի անդրադարձը կիլիկիայի հայկական իշխանության միջավայրում խնամակալության ինստիտուտի առաջացմանը²⁴ եւ Մլեհի կողմից իշխանության զավթման ու օրինականացման հիմունքներին (էջ 129-136, 141-143): Լ. Տեր-Պետրոսյանը ելնելով այն փաստից, որ Մերձավոր Արեւելքի խաչակրաց իշխանություններում խնամակալ էր նշանակվում անչափահաս գահաժառանգի մերձավորագույն ազգականը, այդ իսկ պատճառով Մլեհ իշխանը, ըստ Լ. Տեր-Պետրոսյանի, փորձում է իրագործել սեփական իրավունքը: Մլեհի մասին սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների աղբյուրագիտական եւ պատմագրության մեջ հայտնված տարամետ կարծիքների մանրամասն քննությամբ հեղինակը վեր է հանում Մլեհի, իբրեւ քաղաքական գործի հակասականությունը. փաստորեն ցույց է տրվում, որ նրա իշխանապետության շրջանը Կիլիկյան պետության լեգիտիմության ձեռք բերման ճանա-

²² Ա. Բոզոյան, Բյուզանդիայի արեւելյան..., էջ 158-163:

²³ Ա. Բոզոյան, Բյուզանդիայի արեւելյան..., էջ 203:

²⁴ Այս ինստիտուտին ժամանակին անդրադարձել է նաեւ Ս. Բոռնազյանը (տե՛ս Ս. Վ. Բոռնազյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում XII-XIV դարերում, Երեւան, 1973, էջ 67-70):

պարհին կարեւոր հանգրվան է եղել, թեպետ իշխանութիւնն անցումը Մլեհին ժամանակակիցների տեսանկյունից օրինական չի ճանաչվել: Խաչակրաց պետությունների օրինակով, հեղինակն անդրադառնում է նաեւ Կիլիկյան Հայաստանում բարոնների (ներկա դեպքում՝ իշխանների) ժողովի առկայության փաստին²⁵, վերլուծում է այդ հաստատության գործունեության մի կարեւոր բնագավառ՝ խնամակալութիւնն ինստիտուտի նկատմամբ նրա վերահսկողությունը (էջ 140-142): Այս հաստատում կարելի էր մասնագետների ուշադրությունը հրավիրել նաեւ այնպիսի մի կարեւոր խնդրի վրա, ինչպիսին մահվանից առաջ Թորոս Բ-ի վանական դառնալու մասին Միքայել Ասորու²⁶ վկայությունն է: Նման պրակտիկայի էին հետեւում Բյուզանդիայի կայսրերը, Արեւմտեւորոպական եւ խաչակրաց պետությունների բազմաթիւ տիրակալներ, վերջապէս իրերի նման դրութիւնն է արձանագրված Կիլիկյան Հայաստանի Հեթում Բ արքայի (1289-1293, 1295-1297, 1299-1301) իշխանութիւնն ընթացքում²⁷: Այս խնդիրը եւս, մեր կարծիքով, անուղղակիորեն կապ ունի Թորոս Բ-ի եւ Ռուբինյան իշխանութիւնն լեգիտիմութիւնն հարցի հետ:

Իրավական առումով արդարացնելով Մլեհի նկատմամբ հաշվեհարդարը եւ իշխանութիւնն անցումը Ռուբեն Գ-ին (շրջանցելով առաջինի ժառանգներին)՝ սկզբնաղբյուրները այնուամենայնիւ փորձում են արդարացնել վերջինիս, որից Լ. Տեր-Պետրոսյանը կատարում է բավական նուրբ քաղաքագիտական հետեւություն. «...Ռուբենը, կարծես թէ, այնուամենայնիւ սեփական մեղքը քաղվելու եւ իր մասին նպաստավոր հասարակական կարծիք ձեւավորելու խնդիր ուներ» (էջ 152): Հեղինակն իրավացիորեն նկատում է, որ բյուզանդիայից վասալական կախման անհրաժեշտությունը վերանում է Միրիոկեֆալոնի ճակատամարտում (1176 թ.) բյուզանդական բանակի պարտությունից հետո²⁸, իսկ Ռուբեն Գ-ը փորձում է իրեն հպատակեցնել երկրում մնացած կայսրության վերջին բաստիոնը՝ Հեթումյան իշխանությունը, որն էլ իր հերթին դիմում է Անտիոքի լատին իշխանութիւնն օգնութիւնը: Ռուբեն Գ իշխանի գերությունը Անտիոքում նոր փոխհարաբերությունների սկիզբ են դնում Անտիոքի եւ Կիլի-

²⁵ Իշխանների ժողովին հեղինակն անդրադառնում է նաեւ Ռուբեն Գ-ի իշխանության դարաշրջանի սկզբնաղբյուրները վերլուծելիս (տե՛ս էջ 153-155):

²⁶ Cf. Chronique de Michel le Syrien, patriarche jacobite d'Antioch (1166-1199); éd. et trad. franç. par J.-B. Chabot, Paris 1905, t.III, p. 331.

²⁷ Իշխանությունից հրաժարվելուց հետո վանական սեմ է ընդունել նաեւ Ռուբեն Գ-ը (էջ 163):

²⁸ Լ. Տեր-Պետրոսյանի ուշադրությունից վրիպել է բյուզանդագետներ Կլ. Շենեի (J. Cl. Cheynet, Manzikert: Un désastre militaire – Byzantion, 50, 1980, p. 410-438) եւ Ե. Այկոֆի (E. Eichhoff, Der Ort der Schlacht von Myriokephalon, VIII. Türk Tarih Kongresi, vol. 2, Ankara, 1982, p. 679-687) հոդվածները Մանազկերտի (1071) եւ Միրիոկեֆալոնի ճակատամարտերի մասին:

կիսայի իշխանությունների միջեւ: Միայն Լեւոն Բ իշխանի ջանքերի գերլարման հետեւանքով Կիլիկիայի հայկական իշխանությունը կարողանում է հետզհետե հետ բերել կորցրածը, թեպետ դեռեւս երկու տասնամյակ միջազգային հանրու-թյան կողմից դիտվում է իբրեւ Անտիոքի իշխանության վասալը (էջ 160-163): Այստեղ հետաքրքիր է հեղինակի անդրադարձը 1185 թ. հետո Լեւոն Բ իշխանի կարգավիճակին, իբրեւ Կիլիկյան պետության խնամակալի (էջ 159-160):

Կիլիկիայի հաջորդ տիրակալի գործունեությանը Լ. Տեր-Պետրոսյանն անդրադառնում է գրքի հաջորդ երկու բաժիններում (էջ 164-209). «Լեւոն Բ խնամակալ-իշխան (1187-1198)» եւ «Լեւոն Բ (I) թագավոր Հայոց (1198-1219 թթ.)»: Առաջին բաժնում հեղինակը սկզբնաղբյուրների քննությամբ կարողանում է ցույց տալ, որ Լեւոնն իր գործունեության առաջին շրջանում իշխանությանը տիրացել է իբրեւ Ռուբեն Գ-ի դստրերի խնամակալ: 1194 թ. Բոհեմոնդ Գ-ի հետ կնքած պայմանագրով, որի բովանդակությունը վերականգնվում է սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների ամփոփումով, Լեւոն Բ իշխանը, օգտվելով քաղաքական նպաստավոր պայմաններից, կարողանում է փոխել Կիլիկիայի հայկական պետության քաղաքական կարգավիճակը եւ Անտիոքի իշխանության ստորակայից վերածվում է այդ իշխանության գերակայի: Այստեղ հայագիտության մեջ առաջին անգամ քննության է առնվում Չորտվանել Սասունցու որդի Հեթումի (եւ նրա եղբայր Շահնշահի) ողբերգական ճակատագիրը, որը 1188/9 թ. ամուսնացել էր Ռուբեն Գ-ի ժառանգ-դուստր Ալիսի հետ (էջ 177-179, 506): Երկու եղբայրների համաժամանակյա մահը 1193 թ. Լ. Տեր-Պետրոսյանը իրավացիորեն բացատրում է Լեւոն Բ իշխանի քաղաքական նկրտումներով (էջ 178-179), որն այդ նույն թվականին Անտիոքի իշխանության հետ կնքված պայմանագրով լուծեց իր «լեգիտիմությանն» առնչվող երկու իրավական խնդիր. «...թոթափեց իր վասալական կախվածությունն Անտիոքի իշխանապետից... հնարամտորեն երկարաձգեց խնամակալի կարգավիճակով երկիրը կառավարելու իրեն վերապահված ժամկետը...» (էջ 179): Խնամակալի կարգավիճակից երկրի օրինական տերը դառնալու Լեւոնի մտահոգության հետ է կապում հեղինակը նաեւ 1189 թ. Լեւոնի սկսած բանակցությունները Արեւմուտքի տիրակալների եւ Բյուզանդական կայսրության հետ թագավորի տիտղոս ստանալու համար, ձգտելով օժման շնորհիվ Հայոց գահին տիրելու ցմահ իրավունք ստանալ (էջ 180-182, 184-185): Այստեղ իհարկե հեղինակի ուշադրությունը պետք է հրավիրել այն փաստի վրա, որ Ներսես Լամբրոնացին իր «առ Լեւոն» թղթում, որը գրվել է մինչեւ Լեւոնի օժուժն իբրեւ թագավոր՝ նրան Կիլիկիայի «քրիստոսա-

գոր իշխող», ինքնակալ է կոչում²⁹: Լեւոնի թագադրութեամբ, ըստ հեղինակի, լուծվում է ոչ միայն նրա անձնական «լեգիտիմութեան», այլ նաեւ Հայոց պետութեան միջազգային իրավական կարգավիճակը (էջ 186): Աղբյուրագիտական քննութեան ենթարկելով Լեւոն Ա Ռուբինյանի թագադրութեան մասին սկզբնաղբյուրների տեղեկությունները (էջ 186-195)՝ գալիս է այն համոզման, որ «...ճանաչվելով միաժամանակ Գերմանական ու Բյուզանդական կայսրերի, ինչպես նաեւ Հռոմի պապի կողմից, Կիլիկիո Հայոց թագավորությունը, ժամանակակից քաղաքագիտական լեզվով արտահայտված, դարձել էր միջազգային իրավունքի լիարժեք սուբյեկտ, որի հետ հարկադրաբար հաշվի պիտի նստեին նաեւ մահմեդական երկրները, իսկ հետագայում անգամ մոնղոլները» (էջ 194-195): Պատմագրութեան համար շահագանց արժեքավոր է հեղինակի անդրադարձը Լեւոն Ա-ի եւ նրա հետնորդների կողմից շրջանառութեան մեջ դրած «Ամենայն Հայոց թագավոր» տիտղոսին (էջ 196-201), Ռուբինյանների արքայական ծագման մասին լեգենդի հորինմանը եւ Բագրատունիների իրավահաջորդը լինելու մտքի տեսականացմանը (էջ 202-204): Ռուբինյան պետութեան «լեգիտիմութեան» ամրապնդմանն ուղղված այս հնարանքների կարեւորութեան եւ սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների համապարփակ քննութեանն են նվիրված բաժնի հաջորդ էջերը (էջ 206-209): Այստեղ պետք է միայն հիշեցնել, որ ժամանակակից պատմագրութեան մեջ հարցականի տակ է դրվում Լեւոն Ա-ի «Կաթողիկէ եկեղեցու գերիշխանութունը ընդունելու» (էջ 191) հանգամանքը³⁰: Գրքի այս հատվածում կարող էր քննարկման առարկա դառնալ Ամենայն Հայոց կաթողիկոսի դերը թագավորի օժման գործընթացում, որը թագավորական իշխանութեան լիգիտիմութունը ապահովելու կարեւորագույն պայմաններից մեկը պետք է համարել հայկական ողջ օյկոմենեյում: Հեղինակը հայ պատմագրութեան ապագայի ներկայացուցիչներին է թողնում «լեգիտիմութեանը» վերաբերող այնպիսի խնդիրների հստակեցումը, ինչպիսիք են Լեւոնի ստեղծած պետութեան տեղը աշխարհի տիրակալների ընտանիքում: Լեւոն Ա-ի մահից հետո նոր փորձությունների ենթարկվեց Կիլիկիայի հայկական պետությունը, այդ իսկ պատճառով Լ. Տեր-Պետրոսյանը մանրամասնորեն անդրադառնում է Կիլիկիայի առաջին թագավորի իշխանութեան տարիներից մինչեւ Հեթում Ա-ի գահաժառանգութեան հանգամանքներին վերաբերող

²⁹ Տեառն Ներսէսի Լամբրոնացոյ Տարսնի եպիսկոպոսի Ատենաբանութիւն եւ թուղթ եւ ճառք, Վենետիկ, 1865, էջ 203-242:

³⁰ P. Halfter, Das Papstum und die Armenier im frühen und hohen Mittelalter: von den ersten Kontakten bis zur Fixierung der Kirchenunion im Jahre 1198, Köln; Weimar; Wien; Böhlau Verlag, 1996, p. 265-269; Հմմտ Ա. Բողոյան, Պապությունն ու հայերը վաղ եւ զարգացած միջնադարում. – «Էջմիածին», 1996, ժԲ, էջ 124-125:

սկզբնաղբյուրների վկայությունների մանրամասն քննությանը: Ուշագրավ է հեղինակի անդրադարձը Ռուբեն-Ռայմոնդի անվան մասին սկզբնաղբյուրների քննությանն ու պարզաբանմանը, որին հետեւում է հստակ եզրակացությունը. «...Ռուբենը եղել է մանկան մկրտության անունը, որը նրան տրվել է նշանավորելու համար իր պապի ուղիղ շառավիղն ու այդու՛ Հայոց գահի ժառանգորդը լինելու նրա հանգամանքը» (էջ 212-213): Այնուհետեւ հեղինակը հանգամանորեն անդրադառնում է Ռուբենի գահաժառանգության հետ կապված պատմական սկզբնաղբյուրների եւ այդ խնդրի հետ կապված Լեւոն Ա-ի կողմից Անտիոքի իշխանության նկատմամբ ձեռնարկված ռազմարշավների (1201, 1203, 1208, 1216 թթ.) հանգամանքների պատմաբանասիրական եւ քաղաքագիտական նուրբ խնդիրների քննությանը (էջ 213-225): Հեղինակն այս կապակցությամբ անդրադառնում է նաեւ Մլեհի որդի Գեորգի կուրացման հետ կապված Լեւոն Ա-ի ձեռնարկած քայլերի բացատրությանը (էջ 219-220), չի անտեսում նաեւ Կիլիկիայի պատմության այս փուլում Լեւոնի ձեռնարկած քաղաքական ամուսնությունների նշանակության բացահայտմանը (էջ 223), որոնք կարող են ավելի ամբողջական պատկերացում ստեղծել Լեւոնի ստեղծած պետության միջազգային ճանաչման եւ «լեգիտիմության» աստիճանի մասին: Այս տեսանկյունից քննության նյութ է դարձել նաեւ Լեւոն Ա-ի եւ Ռուբեն-Ռայմոնդի հակամարտությունը, վերջինիս հեռացումը ոչ միայն Կիլիկիայի հայկական իշխանության, այլ նաեւ Անտիոքի կառավարումից (էջ 225-227), վերլուծում է նաեւ 1221 թ. Ռուբեն-Ռայմոնդի կողմից Կիլիկիայի հայկական իշխանության բռնազավթման անհաջող փորձը (էջ 227-229): Պատմագրության համար կարեւոր նշանակություն ունի Կիլիկիայի եւ Անտիոքի միացյալ պետություն ստեղծելու Լեւոն Մեծագործի նպատակների քննումը՝ ըստ սկզբնաղբյուրների եւ ժամանակակից պատմագրության տեսական քննարկումների (էջ 230-235): Շեռագրումների մեջ պետք էր ընթերցողին հիշեցնել Ռուբեն Գ իշխանի դուստր Ալիսի դերակատարությունը գահաժառանգության խնդիրների հետ կապված իրադարձությունների հորձանուտում: Մեր կարծիքով՝ թե՛ Ալիսի եւ թե՛ հետագայում Լեւոնի դուստր Զապելի պարագայում նրանց ժառանգական իրավունքները շարունակվել են նաեւ ամուսնությունների կամ արու ժառանգ ունենալու դեպքում, այդ իսկ պատճառով նրանց պետք է համարել համահավասար գահակալներ Ռուբեն Ռայմոնդի, Փիլիպոսի եւ Հեթում Ա-ի հետ միասին, հանգամանք, որին համապատասխան ուշադրություն չի դարձվել Լեւոն Ա թագավորի վերջին տարիների եւ մահից հետո ընկած ժամանակաշրջանը նկարագրող գլուխներում:

Ռուբեն-Ռայմոնդից երես թեքելուց հետո Լեւոն Ա-ը 1216 թ. իր իշխանության օրինական ժառանգ է հաստատում իր դուստր Զաբելին: Լ. Տեր-Պետ-

րոսյանն անդրադառնում է Կիլիկիայի հայկական իշխանության ժառանգման հետ կապված Լեւոն Ա-ի ծրագրերին. չորսամյա Զաբելի եւ Հունգարիայի թագաժառանգ Անդրաշ կրտսերի ամուսնական ծրագրին (էջ 236-239), Սիր Ատանի խնամակալության շրջանին (էջ 239-242, 243-244), Երուսաղեմի թագավոր Հովհաննես Բրիենացու նկրտումներին (էջ 242), Կոստանդին պալլի խնամակալության առաջին շրջանին եւ Փիլիպոս Անտիոքացու հետ Զաբելի քաղաքական ամուսնությանն ու այդ գործարքի խափանմանը (էջ 244-253): Պատմաբանի համար հատկապես հետաքրքիր են քաղաքական կոնյուկտուրայի փոփոխությունները, որոնք հիմք են դարձել Կոստանդին պալլի համար իշխանությունը իր ձեռքում կենտրոնացնելու խնդրում: Այս հատվածում Լ. Տեր-Պետրոսյանը քաղաքագետ-պատմաբանի հոտառությամբ եւ սկզբնաղբյուրների հայտնած տեղեկությունների նուրբ քննարկումով մեկը մյուսի հետեւից լուսաբանում է Լեւոն Ա-ի վերջին տարիներից Կիլիկյան Հայաստանի իշխանությունների առջեւ կանգնած դժվարությունները, որոնք կապված էին գահաժառանգման կարգի եւ իշխանության «լեգիտիմության» խնդիրների հետ:

Հեթում Ա-ի եւ Զաբելի իշխանության, Կոստանդին պալլի խնամակալության շրջանին է նվիրված գրքի հաջորդ բաժինը (էջ 254-296): Այստեղ հեղինակն անդրադառնում է Կոստանդին խնամակալի գործունեության նոր շրջանի գահաժառանգման կարգի եւ իշխանության «լեգիտիմության» խնդրի հետ առնչվող հիմնական սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների հետազոտությանը: Խոսվում է Կիլիկիայում արդեն կայացած «Արքունի ատյանի» գոյության մասին, որը 1226 թ. որոշում ընդունեց Զապելին ամուսնացնել Կոստանդին պալլի զավակ Հեթումի հետ եւ վերջինիս օձել Հայոց թագավոր: Այդ ինստիտուտի եւ նրա կողմից խնամակալ նշանակելու գործառնության մասին Լ. Տեր-Պետրոսյանը խոսում է ավելի վաղ ժամանակներից (Մլեհի մահից հետո)՝ այն նույնացնելով խաչակրաց արեւելքի պետությունների համանման ինստիտուտների հետ (էջ 131-135): Փիլիպոս Անտիոքացուց իշխանության անցումը Հեթում Ա-ին Լ. Տեր-Պետրոսյանն անվանում է «պետական հեղաշրջում» (էջ 257), որը, մեր կարծիքով, ճշգրիտ է արտահայտում իրերի վիճակը, եթե նկատի ունենանք, որ իշխանության լծակները անտիոքյան կողմնորոշման կողմնակիցներից կրկին անցնում է հայ իշխանների ձեռքը: Կարծում ենք հիմնավորված չէ դա «պետական հեղաշրջում» կոչել այն իմաստով, որ «Կիլիկիո թագավորության գահն անցավ Ռուբինյանների երբեմնի ախոյանների՝ Հեթումյան գերդաստանի ներկայացուցիչների ձեռքը» (էջ 258): Տվյալ պարագայում, կարծում եմ Ռուբինյան-Հեթումյան հակամարտության մասին խոսելն արդարացված չէ, քանի որ Կոստանդին պալլի կողմից ներկայացվող Հեթումյանների պապեռոնյան ճյուղը վաղուց էր բաժանվել Լամբրոնի ճյուղից եւ

Մլեհի մահից հետո միշտ գտնվում էր Ռուբինյանների իշխանության ներքո, ճանաչում էր վերջինիս գերակայությունը եւ համախոհ էր վերջիններիս ձգտումներին: Այս տեսանկյունից կարելու է եզրակացությունը. «...Հեթումի գահակալումը չխախտեց նաեւ Ռուբինյանների հաստատած ամենահիմնական քաղաքական ավանդույթը, այն է՝ Լամբրոնի Հեթումյանների դեմ պայքարի շարունակականությունը...» (էջ 261): Այս տեսանկյունից հատկանշական է, որ թագավորահայր Կոստանդին պալլի կողմից Լամբրոնի Հեթումյաններին տրված բարձր պատիվներից հետո էլ, նրանք շարունակում են պահել իրենց ըմբոստ կեցվածքը (էջ 266-267): Հեղինակն անդրադառնում է նաեւ Զաբելի ապստամբությանը վերաբերող սկզբնաղբյուրների հաղորդած վկայությունների քննարկմանը (էջ 255-257), ինչպես որ իր տեղում անդրադարձել էր Ռուբեն-Ռայմոնդի եւ նրա մայր Ալիսի բարձրացրած խռովությանը (էջ 227-229), հատկանշական է որ երկու խռովությունների օջախն էլ եղել է Սելեկիա քաղաքը, որը գտնվում էր Հիվանդախնամ ասպետների կարգի իշխանության ներքո: Պատմագրության համար կարելու է ներդրում է նաեւ Լ. Տեր-Պետրոսյանի դիպուկ դիտողությունը. Կիլիկիայի հարստությունների բաժանումը Ռուբինյանների եւ Հեթումյանների (այնուհետեւ՝ Լուսինյանների) արհեստական է, քանի որ պաշտոնական հրովարտակներում նման բաժանման որեւէ հետք չկա (էջ 258-261): Գահաժառանգման խնդիրներին վերադառնալով՝ Լ. Տեր-Պետրոսյանը պարզում է, որ ինչպես Փիլիպոսը, այնպես էլ Հեթում Ա-ը երկրի կառավարման դեկը ստանձնել են «ոչ թե լիիրավ թագավորի, այլ թագադիր-գործակցի (*prince consort*) կարգավիճակով» (էջ 268): Այնուամենայնիվ, չեմ կարծում, որ պետք է բացարձակացնել միայն Զաբելի իրավական կարգավիճակը (էջ 268-269), քանի որ դրան մոտ է եղել նաեւ Ռուբենի դուստր Ալիսի ստատուսը, թեպետ նրա անունով դրամ մեզ չի հասել: Զաբել թագուհու կարգավիճակի հաստատունության մասին են խոսում ԺԳ դարի առաջին կեսի բազմաթիվ վկայություններն ու հիշատակարանները, որոնք բերվում են գրախոսվող գրքում (էջ 269-272): Հեղինակն այստեղ անդրադառնում է նաեւ Կոստանդին պալլի քաղաքական կարիերային Լեւոն Ա թագավորի արքունիքում, թագի հավակնորդների նկատմամբ նրա սառնասիրտ հաշվարկներին, որով վերջիվերջո պետության կառավարման բոլոր լծակները կենտրոնանում են նրա ընտանիքի անդամների ձեռքում (էջ 273-277): Հեղինակը չի գլանում ներկայացնել նաեւ այն բոլոր տիտղոսներն ու պատվանունները, որոնցով Կոստանդին պալլ-թագավորահայրը պատվվել է սկզբնաղբյուրներում (էջ 277-283): Իհարկե, կարծում եմք դույզն-ինչ բացարձակացված է Կիլիկիայի նման փոքրիկ պետության առաջին դեմքի մասին խոսելիս, սկզբնաղբյուրներում նրա նկատմամբ տաժած հարգանքի եւ գովաբանության վկայու-

թյունները համարել երկրում Կոստանդինի «անձի պաշտամունքի» վկայություն (էջ 282-287): Գուցե տերմինը լավ չէ ընտրված, քանի որ Կոստանդինի խնամակալության շրջանը Լ. Տեր-Պետրոսյանը համարում է «Հայոց թագավորության համար երկնաշնորհ բարեբախտություն» եւ գահաժառանգության «ինստիտուտի ամենալուրջ քննության» շրջան ոչ միայն «Կիլիկիո, այլև համաշխարհային պատմության մեջ»: Հեթում Ա-ին անդրադառնալիս հեղինակը հարկ է համարում շեշտել. «...երկրի կառավարման գործում Կոստանդինն ու Հեթումը, որքան էլ խառնվածքով ու գործելակերպով տարբեր, շահեկանորեն լրացնում էին միմյանց՝ առաջինը լինելով պետության ուժի եւ կարգավորիչ դերի մարմնավորումը, իսկ երկրորդը՝ նրա բարոյական արժեքների կրողը» (էջ 287), ուշադրություն է հրավիրում Կիլիկիայի արտաքին քաղաքական կյանքում Մեծ Հայքի իշխաններին հատկացված կարեւոր դերի վրա (էջ 291-292): Հատվածի վերջում հեղինակն անդրադառնում է Մառիի ճակատամարտում եգիպտոսի մամլուկներից կրած պարտության հետեւանքներին (էջ 292-296): Այստեղ եւս, ինչպես Թորոս Բ-ի դեպքում սկզբնաղբյուրները հայտնում են, որ երկրի ղեկավարը կրոնավորական կարգ է մտել: Այս հանգամանքը խոսում է հոգեւոր եւ աշխարհիկ իշխանությունների միացման սկզբունքի մասին, թագավորի հոգեւոր դերի բարձրացման եւ լեգիտիմության ապահովմանը նաեւ հոգեւոր բնագավառում:

Գահաժառանգության եւ «լեգիտիմության» հարցերին ավելի մասնագիտական պատասխան տալու ակնկալությամբ, հեղինակն անդրադառնում է Կիլիկիայի միջազգային իրավական կարգավիճակին ԺԳ դարի ողջ ընթացքում. Ռումի սելջուկյան սուլթանության գերակայության ճանաչումից (1218/9 թ.) անցումը Մոնղոլների մեծ խանությունից վասալական կախվածությանը (էջ 297-315): Խոսվում է սելջուկներին տարեկան 300-400 զինվոր տալու եւ հարկ վճարելու պարտականության, համատեղ դրամ հատելու փաստի մասին: Հայ-սելջուկյան դրամների մասին խոսելիս հեղինակի ուշադրությունից վրիպել է դրամագետ Յ. Տեր-Ներսիսյանի հետազոտությունը³¹: Դրամի հատման խնդիրը բացի վասալական կախվածության փաստարկ լինելուց կարող էր նշանակել նաեւ համատեղ շուկա, տնտեսական գործունեության դաշտ ստեղծելու երկու պետությունների մտահոգության մասին, խնդիր, որը կարող է նոր հետազոտությունների դուռ բացել: Քյուսե-Ռաղի ճակատամարտում (1243 թ.) Ռումի սուլթանության պարտությունից հետո, Կիլիկիան կախվածության մեջ է ընկնում մոնղոլների տիրակալությունից, ընդգծելով, որ պատմագրության մեջ

³¹ Y. T. Nersessian, Attribution and dating of Armenian Bilingual Trams, Los Angeles, 1983.

հաճախ օգտագործվող «Դաշինք» տերմինը ճիշտ չի արտացոլում իրերի վիճակը, քանի որ մոնղոլներն իրենց իշխանությունը ճանաչած երկրները եւս համարում էին պետության անքակտելի մասը: Այդ մասին են վկայում տարեկան հարկի վճարման, թանկարժեք ընծաների մատուցման, մոնղոլների ռազմարշավներին մասնակցության, պաշտոնյաների երթեւեկի ծախսերը հոգալու պարտավորությունները, որոնք ստանձնել է Կիլիկյան Հայաստանը: Այնուամենայնիվ Լ. Տեր-Պետրոսյանն ընդգծում է, որ «...Կիլիկիո Հայոց թագավորության վասալական կախվածությունը Մոնղոլական խանությունից առանձնապես չէր սահմանափակվում նրա անկախությունը, մանավանդ ներքին քաղաքականության բնագավառում» (էջ 311): Ըստ հեղինակի՝ այդ հարաբերությունների լավագույն գնահատականը տվել է Գրիգոր Ակնեցին, անվանելով այն «Դաշինք սիրոյ եւ հնազանդութեան»³²: Հեղինակը չի անդրադառնում Հայթոնի (Հեթում Կոռիկոսցի) «Արեւելքի պատմության ծաղկաքաղ» գրքում բերված «հայ մոնղոլական պայմանագրին», քանի որ այն որոշ պատմական ճշմարտություն պարունակելով, այնուհանդերձ «ընդհանուր առմամբ արդյունք է հեղինակի անսահման երեւակայության եւ հետապնդում է զուտ քարոզչական նպատակներ» (էջ 315): Վերադառնալով Լեւոն Բ-ին՝ հեղինակը կարողանում է ցույց տալ, որ թեպետ նրա հայր Հեթում Բ-ը (մահ՝ 1270 թ.) հրաժարվել է իշխանությունից թողնելով գահը որդուն, այնուամենայնիվ վերջինս անմիջապես չի օժվել թագավոր: Այդ իրադարձությունը տեղի է ունեցել 1271 թ. հունվարի 6-ին, Ս. Ծննդյան եւ Աստվածահայտնության օրը: Հեղինակը խնդրին անդրադառնում է նաեւ Մոնղոլական խանության նկատմամբ Կիլիկիայի ունեցած պարտականությունների տեսանկյունից՝ ընդգծելով, որ մոնղոլական տիրապետության շրջանում իշխանության «լեգիտիմությունը» ապահովվում էր մոնղոլների կողմից ճանաչման փաստով: Այդ երեւույթը նմանեցնելով եվրոպական ստանդարտներին, անվանում է «ինվեստիտուրա» (իշխանության տվություն), բացատրում է, որ մոնղոլները սոսկ «վավերացնում էին Հայոց օրինակն թագաժառանգի գահակալման իրավունքը... ընդգծելու մոնղոլ խաների գերակա լինելու հանգամանքը» (էջ 323): Հետաքրքիր կլիներ ներկա դեպքում նաեւ նկատի ունենալ, որ նույն կարգին ենթարկվում էր նաեւ հոգեւոր իշխանությունը սկսած Սասանյան տիրապետությունից, եւ հարցը քննել ամբողջական տարողությամբ: Մոնղոլական շրջանում Կիլիկիո Հայոց թագավորության միջազգային իրավական կարգավիճակի էությունն ըմբռնելու տեսանկյունից ուշագրավ անդրադարձ է Հեթում Կոռիկոսցու «Արեւելքի պատմու-

³² Գրիգոր Ակնեցի, Պատմութիւն, էջ 31: Հմմտ. նաեւ՝ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 285:

թյան ծաղկաքաղ» գրքում պահպանված այն վկայությունը, ըստ որի Աբաղա խանն առաջարկել է Լեւոնին՝ նրա իշխանությունը տարածել նաեւ Ռուսի (Իկոնիայի) սուլթանության վրա: Քաղաքագետի տեսանկյունից մոտենալով խնդրին Լ. Տեր-Պետրոսյանն այսպես է մեկնաբանում Լեւոնի մերժումը. «...Եթե սելջուկյան սուլթանության կառավարումը ծանր բեռ էր Մոնղոլական խանության համար, ապա ավելի ծանր բեռ պիտի լիներ Հայոց թագավորության համար... Ուստի Լեւոնը, ճիշտ գնահատելով իր երկրի հնարավորությունները, հրաժարվեց ընդունել Աբաղայի առաջարկը...» (էջ 324): Մոնղոլական գերակայության ընդունումը քննարկվում է նաեւ համահայկական շահերի տեսանկյունից, ընդգծվում է. «Մոնղոլական տիրապետության շրջանում Հայաստանը եւ Կիլիկիան, թեպետ տարբեր կարգավիճակներով, առաջին անգամ հայտնվել էին մեկ տերության կազմում: Այս հանգամանքը հեշտացնում էր հայության երկու հատվածների հաղորդակցությունը եւ ամրապնդում նրանց ընդհանրության գաղափարը: Լեւոնն իր կողմից անում էր ամեն ինչ՝ ավելի եւս ամրապնդելու այդ գիտակցությունը եւ արդարացնելու ամենայն Հայոց թագավորի իր կոչումը» (էջ 325): Հեղինակն այնուհետեւ սկզբնաղբյուրներից վկայություններ է բերում Մեծ Հայքի հոգեւոր կենտրոնների նկատմամբ Լեւոն Բ-ի տաճած հոգածության մասին (էջ 325-327), այդ տեսանկյունից դիտելով Կիլիկիայի թագավորության եւ Ամենայն Հայոց կաթողիկոսության փոխհարաբերությունները Այոնյաց աթոռի հետ, թափանցում է դրանց քաղաքական օգտակարության ոլորտը (էջ 327-332): Այստեղ հեղինակն անդրադառնում է նաեւ Կեռան թագուհու «պաշտամունքի» խնդրին, շեշտելով. «Կեռան թագուհու «պաշտամունքի» ձեւավորումն, անտարակույս, տեղի էր ունեցել Զաբել թագուհու մեծարման ավանդույթի հետեւողությամբ, թեեւ վերջինիս պարագան... բոլորովին այլ էր՝ պայմանավորված նրա առանձնահատուկ կարգավիճակով ու քաղաքական կշռով» (էջ 332-333): Լեգիտիմության տեսանկյունից կարեւոր է այն հանգամանքը, որ Կեռանը Լամբրոնի Հեթումյանների դուստրն է: Անցնելով Լեւոն Բ-ի «լեգիտիմության» խնդրին՝ ճշտում է նրա երեխաների քանակը (շուրջ 18) ու ծննդյան թվականները, լրացնելով Ռուդ-Վոլենբերգի ցանկի տվյալները (16), ստուգում նրա մահվանից հետո կենդանի մնացած զավակների անունները, որոնց մեծ մասը հետագայում իրենց դերակատարությունն են բերել «Հայոց գահի ճակատագրի տնօրինման գործում» (էջ 333-336):

Հեթում Բ-ի գահաժառանգման դեպքը մինչ այս քննվածներից ամենադասականն է միջնադարյան հայ իրավունքի տեսանկյունից, քանի որ նա ժա-

ուանգել է գահը ավագագույն որդու³³ հանգամանքով՝ ստանալով «Հայոց արքունի ատյանի»³⁴ հավանությունը, ինչպես այդ մասին պատմում է Ֆրանսագիր Հայթոն պատմիչը՝ Հեթում Կոռիկոսցին: Հեթումի իշխանության կարեւորագույն առանձնահատկություններից էր նաեւ այն, որ նա երբեք չամուսնացավ եւ չթագադրվեց³⁵: Այդ իսկ պատճառով պատմաբանների ուշագրության առարկան է դառնում այն հանգամանքը, որ սկզբնաղբյուրները նրան պատվում են միայն «Թագապահ», «Թագակալ» եւ «աթոռապահ» տիտղոսներով (էջ 339): Գահաժառանգման իրավունքի տեսանկյունից՝ հեղինակն անդրադառնում է նաեւ Հեթումի բազմակի հրաժարականներին, փորձում պարզել դրանցից յուրաքանչյուրի պատճառը (էջ 341-343): Միայն իր եղբայր Թորոսի օգտին, ինչպես պարզվում է, Հեթում Բ-ը հրաժարվել է երիցս: Գահաժառանգության տեսանկյունից՝ այստեղ «էականը... իշխանության փոխանցման եւ վերստանձման... փաստն է» (էջ 345) ծննդյամբ Հեթում Բ-ից անմիջապես հետո ծնված եղբորը, պահելով գահաժառանգության իրավունքի գլխավոր սկզբունքը՝ Արքունի ատյանի³⁶ հավանությամբ իշխանությունը հանձնել եղբայրներից ավագագույնին (էջ 346): Հետաքրքիր է, որ Թորոսի իշխանությունը սկզբնաղբյուրներում անվանվում է «պարոնություն»: Այդ իսկ պատճառով, Լ. Տեր-Պետրոսյանը՝ հետեւելով Մ. Օրմանյանին եւ Կ. Մութաֆյանին, ենթադրում է. «...Թորոսն իսկապես Կիրիկիան կառավարել է թագավորից տարբեր իրավական կարգավիճակով...», որը նմանվում է Կոստանդին պալլի ստատուսին (էջ 346-348): Հետագա հետազոտության նյութ կարող է դառնալ Հեթում Բ-ի եւ Թորոսի կարգավիճակների տարբերությունը: 1296 թ. Հեթում Բ-ը եւ Թորոսը Կիրիկիայի կառավարումը հանձնում են իրենց կրտսեր եղբորը՝ Սմբատին եւ մեկնում Կոստանդնուպոլիս: Վերջինս նույն թվականին կաթողիկոսի եւ իշխանների խորհրդով թագավոր է օծվում, մեկնում է Ղազան խանի մոտ եւ «տվչություն» ստանում նրանից (էջ 350-351): Հեղաշրջումը տապալելու հույսով Կ. Պոլիս մեկնած եղբայրները 1297 թ. վերադառնում են եւ ձերբակալվում Սմբատի կողմից. Թորոսը խեղդամահ է արվում, իսկ Հեթումը՝ կուրացվում: Իշխանության անօրինական բռնազավթումը, ավագ եղբայրների նկատմամբ բանեցված վայրագությունը եւ վերջապես 1298 թ. մամլուկներից կրած պարտու-

³³ Հեթումի անդրանիկ որդի Կոստանդինը մահացել է մանուկ հասակում (էջ 333, 338):

³⁴ Տերմինը հաճախ է օգտագործում Լ. Տեր-Պետրոսյանը՝ օգտվելով խաչակրաց արեւելքի պաշտոնեության անվանացանկից: Սկզբնաղբյուրներում, հաճախ դրա փոխարեն հիշատակվում են երկրամասի գորավարներն ու իշխանները, այլ կերպ ասած՝ պարոնները:

³⁵ Սկզբնաղբյուրներն այդ հանգամանքը բացատրում են կրոնական կյանին նվիրվելու կամ երկնայն թագավորությանն արժանանալու ցանկությամբ (էջ 339):

³⁶ Հիշարժան է, որ արժունի ատյանի կազմում Հայթոնը հիշատակում է նաեւ կաթողիկոսին (էջ 346, նաեւ ծան. 41):

թյունը նրա դեմ են հանում Կիլիկիայի իշխաններին՝ արքայազն Կոստանդինի գլխավորությամբ եւ տապալում են Սմբատին: Քննելով սկզբնաղբյուրների հակասական վկայությունները Լ. Տեր-Պետրոսյանն ենթադրում է, որ բանտից ազատված Հեթում Բ-ը Կիլիկիայի կառավարումը 1298 թ. հանձնել է Կոստանդինին, որն էլ բռնազավթելով իշխանությունը թագավոր է օծվել, դրամ հատել (էջ 355-356): Հեղինակը բացատրում է նաեւ այն փաստը, որ Հեթում Բ-ը մոնղոլներից տվչություն (ինվեստիտուրա) ստացած Սմբատի հեռացումն ու իր վերադարձն օրինականացնելու համար 1299 թ. երկրորդ անգամ է այցելել Ղազանին ու օրինականացրել իր իշխանությունը (էջ 360): 1301 թ. Հեթում Բ-ը «գահակցի» (կամ խնամակալի) հանգամանքով Կիլիկիայում իշխանությունը կիսում է Թորոսի անչափահաս որդի Լեւոնի հետ, որի պաշտոնական թագադրումը կատարվում է 1306 թ. հունիսի 30-ին (էջ 361-374): Ըստ հեղինակի՝ «...Լեւոնի գահակալումը թե՛ բովանդակության, թե՛ արարողակարգի իմաստով լիովին համապատասխանում էր գահաժառանգության կիլիկյան իրավունքի սկզբունքներին, որոնց սահմանմամբ՝ Հեթումի անզավակության պատճառով Հայոց գահը պետք է փոխանցվեր նրա եղբայրներից ավագագույնին, իսկ վերջինիս մահվան դեպքում ոչ թե հաջորդ եղբորը, այլ հանգուցյալի որդուն» (էջ 367): 1307 թ. թագավորի եւ նրա խնամակալի սպանությունը համարելով ծայրագավառային մոնղոլ պաշտոնյալի ձեռնարկած ինքնազլուխ քայլ (էջ 368-374)՝ քաղաքագետ-պատմաբանը մեղադրում է Հեթում Բ-ին այն բանում, որ նա իր գործունեության ընթացքում չկարողացավ կողմնորոշվել կրոնավորական սքեմի եւ թագի միջեւ:

Հիշատակված քաղաքական հաշվեհարդարից հետո Կիլիկիայի գահն անցնում է Հեթում Բ-ի կրտսեր եղբայրներից Օշինին³⁷: Հեղինակը բացահայտում է կիլիկյան գահաժառանգության կարգի եւս մեկ առանձնահատկություն. այդ իրավունքը չէր տարածվում դավաճանի (իմա՝ բռնազավթչի) վրա, անգամ նրա ավագ լինելու պարագայում (էջ 386): Հետաքրքիր է նաեւ Օշինին մոնղոլների կողմից իշխանության տվչության հարցը: Սկզբնաղբյուրները ոչինչ չեն հաղորդում Օշինի այցի մասին մոնղոլների արքունիք, քանի որ մոնղոլները իշխանության յառլսը (տվչություն, ինվեստիտուրա) հանձնում էին անձամբ գահակալին, այդ իսկ պատճառով Լ. Տեր-Պետրոսյանը ենթադրում է. «Թեպետ

³⁷ Սկզբնաղբյուրների համադրությամբ Լ. Տեր-Պետրոսյանը փորձում է ցույց տալ, որ սկզբնաղբյուրներում շփոթ գոյություն ունի այս հարցի կապակցությամբ: Այս առումով հատկապես հետաքրքիր է 1308 թ. գրված հիշատակարանի տեղեկությունը. «...ի պարոնութեան Հայոց Աշնի եւ եղբար իւոյ Ալինախի», եւ 1310 թ. գրված հիշատակարանը. «Ի թուականի Հայոց ՉԾԹ, յաշխարհակալութեան ազգին նետողաց Դարպանտա դանին, եւ Հայոց թագաւորութեան Ալինախին» (էջ 383-384, ծնթ. 14 եւ 15):

բացառված չէ նաեւ, որ Օլջէյթուն իշխանութեան տվչութիւնն Օշինին փոխանցած լինէր Ալինախի միջոցով, այն պայմանով, որ հետագայում նորընծա թագավորն անձամբ ներկայանար իրեն եւ ստանար գահին տիրելու իրավունքը» (էջ 387-388):

Լեւոն Դ-ի ծննդյան եւ օծման թվականները պարզելուց հետո (էջ 394-395), հեղինակը ձեռնամուխ է լինում նրա իշխանութեան նկատմամբ Օշին թագավորի կողմից մի քանի խնամակալների հաստատման փաստի քննարկմանը (էջ 394), ենթադրելով, որ «... նա ուզում էր խնամակալների միջեւ փոխադարձ վերահսկողութեան մեխանիզմ ստեղծել՝ բացառելու համար նրանցից մեկի կողմից իշխանութեան բռնազավթման հնարավորութիւնը» (էջ 397)՝ թեպետ սկզբնաղբյուրներից պարզ երեւում է, որ Օշին պայլը հետզհետե իր ձեռքն է վերցնում իր խնամարկչալի վրա ողջ իշխանութիւնը եւ սկսում է անօրինութիւնների մի անվերջանալի շղթա, որի նպատակն է ոչնչացնել գահի նկատմամբ հավակնութիւն ունեցող յուրաքանչյուր անձի (էջ 400-401): Չափահաս դառնալու նախօրեին, Լեւոն Դ-ը եւս 1329 թ. հաշվեհարդար է տեսնում իր երկու խնամակալների (Օշին պայլ եւ վերջինիս եղբայր Կոստանդին գունդաստաբլ) եւ իր կնոջ (Օշին պայլի դուստր Ալիս) հետ, որոնք ըստ երեւութիւն փորձել էին գահընկեց անել օրինական գահաժառանգին (էջ 401-404): Լեւոն Դ-ի իշխանութեան տարիներին փոխվում է Կիլիկիայի Հայոց թագավորութեան իրավական կարգավիճակը. իլխանութեան քայքայումով թեպետ Կիլիկիան ազատվեց մոնղոլների գերակայութիւնից, սակայն մեն-մենակ մնաց եգիպտոսի մամլուկների դեմ պայքարում (էջ 405): 1337 թ. Լեւոնը ստիպողական պայմանագիր կնքեց եգիպտոսի հետ, որով իր երկրի մի մասը Ալասի հետ միասին զիջեց եգիպտոսին՝ պարտավորվելով խզել հարաբերութիւններն Արեւմուտքի հետ: Չունենալով արու ժառանգ՝ Լեւոն Դ-ը գահը կտակում է հորաքրոջ որդուն, որը Բյուզանդական կայսրութիւնում հասել էր բարձր հասարակական դիրքի (էջ 410-411):

Գի (Կոստանդին) Լուսինյանի թագադրումը տեղի է ունեցել 1342 թ.: Մինչեւ նրա վերադարձը, երկրի խնամակալութիւնը (պայլութիւնը) մեկ տարի ստանձնում է կրտսեր եղբայրը՝ Հովհաննես-Ջուանը³⁸: Հստակեցնելով, որ «...գործ ունենք Կիլիկիո պատմութեան մեջ իգական գծով գահաժառանգութեան շորորդ դեպքի հետ... Իրավական առումով Գիի գահակալումն ամենեւին թագավորական հարստութեան փոփոխութիւն չէր նշանակում, ինչպես ներկայացնում են հետազոտողներից շատերը՝ Լուսինյաններին համարելով Կի-

³⁸ Քննարկելով Չաւչյանի եւ Օրմանյանի թույլ տված սխալը՝ Լ. Տեր-Պետրոսյանը ցույց է տալիս, որ նա երբեք չի թագադրվել (էջ 414-415):

լիկիո երրորդ արքայատոհմը՝ Ռուբինյաններից եւ Հեթումյաններից հետո: Նման դատողությունն արդյունք է քարացած այն պատկերացման, որ թագավորական հարստությունը կարող էր շարունակվել միայն արական գծով» (էջ 415-416): Չափազանց կարեւոր է նաեւ հեղինակի բերած ապացույցները, ըստ որի Գին կրել է նաեւ Կոստանդին անունը (էջ 416-417) կամ հրաժարվել է գահակալման առիթով նվերներ մատուցել Եգիպտոսի սուլթանին (էջ 418-419): Քննելով հայ իշխանների կողմից Գիի սպանության պատճառները՝ Լ. Տեր-Պետրոսյանը կարծում է, որ դրանք սովորական պատրվակներ են (նույնիսկ լատինասիրության մեջ մեղադրանքը). «...պարզապես հայտնվել էին ուժեր՝ հանձինս Կոստանդին Նդիրցու եւ իր կողմնակիցների, որոնք պետական հեղաշրջման միջոցով տիրել էին Հայոց թագավորությանը» (էջ 420-424):

Կոստանդին Գ-ին թագավոր է ընտրում Հայոց իշխանների խորհուրդը, Կիլիկիայի Հայոց պետության Գերագույն Աստանը (էջ 425-426): Լ. Տեր-Պետրոսյանը, հակադրվելով ժան Գարգելի հաղորդած տեղեկությանը, ցույց է տալիս, որ Կոստանդինի հայր Պաղտին մարաշախտը Լեւոն Գ-ի չորս խնամակալներից մեկն է եւ արյունակցական հարազատություն ունի Կոստանդին թագավորահոր (մահ. 1263) հետ (էջ 426-432): Այնուամենայնիվ, ընդգծվում է, որ Կոստանդին Գ-ի «լեգիտիմությունը» խոցելի էր, քանի որ կենդանի էին «Հայոց արքայատոհմի թեկուզ իգական գծով ուղիղ շառավիղները՝ Հովհաննես-Ջիվան Լուսինյանի որդիներ Բոհեմունդը եւ Լեւոնը» (էջ 433-434), որոնցից փորձում էր ազատվել թագավորը: Հետեւողական է նաեւ հեղինակի այն մոտեցումը, որ Կոստանդինի օրոք Հայոց պետության տարածքային կորուստները չեն բխում թագավորի անձնական արժանիքներից, այլ ժամանակի միջազգային-քաղաքական իրավիճակից, այն «...երկրի ռեսուրսների սպառման եւ քաղաքական մեկուսացման հետեւանք էր» (էջ 436):

Հեղինակը հիմնվելով Բրիտանական թանգարանի Or5458-Arm.116 ձեռագրում գտնվող մի վկայության վրա, կարողացել է պարզել, որ 1362-1364 թթ. Կիլիկիայի գահն անցել է Կոստանդին Գ-ի այրուն՝ Լամբրոնի Հեթումյան տնից սերող Մարիոն թագուհուն, որը, ըստ այդ սկզբնաղբյուրի, իշխել է մեկ տարի ամուսնու մահից հետո, մեկ տարի էլ Կոստանդին Գ-ի *de facto* իշխանության առաջին տարում, որին 10 ամիս հաջորդել է Հովհաննես-Ջիվան իշխանի որդի Լեւոնը (էջ 437): Ղ. Ալիշանը, հիմնվելով ԺԸ դ. ժամանակագիր Ավետիք Ամդեցու եւ ԺԵ դարի կիպրացի տարեգիր Լեոնտիոս Մախերասի պատմական երկերի վրա, ենթադրում է, «որ 1363-1365 թթ. միջեւ ընկած խառնակ ժամանակահատվածում Հայոց գահին տիրել է մի այլ թագավոր՝ Լեւոն անունով» (էջ 438): Լ. Տեր-Պետրոսյանը պարզում է, որ կիպրացի պատմագրի մոտ առկա է ժամանակագրական շփոթ, եւ նրա մոտ խոսքը Կիլիկիայի

վերջին արքա Լեւոնի մասին է: Ժամանակագրությունն ավելի է խճճվում նրանով, որ 1363-1365 թթ. միջև գրամագետ Պ. Պտուկյանը առանձնացնում է շուրջ 41 դրամ, որոնք վերագրում է այսպես կոչված Լեւոն բռնագավթին: Քննելով սկզբնաղբյուրների տեղեկությունները՝ հեղինակը եկել է հետեւյալ համոզման. «Քանի որ Կոստանդին Գ (III) որդիները մահացած էին... Հայոց գահը ժամանակավորապես անցել է Մարիոն թագուհուն, 1363 թվականին Կիլիկիո Արքունի ատյանը որոշում է կայացրել գահակալելու հրավիրել երկրի միակ օրինական թագաժառանգ Լեւոն Լուսինյանին... Սակայն Լեւոնն ինչ-ինչ պատճառներով հրաժարվել է դրանից, եւ Հայոց իշխաններն ստիպված են եղել որոշ ժամանակ համոզել ու սիրաշահել նրան՝ այդ նպատակով նույնիսկ նրա անունով դրամ հատելով» (էջ 442): Անբացատրելի է մնում այն հանգամանքը սակայն, թե ինչպես կարելի էր *de jure* թագավորելով՝ դրամ հատել: Կոստանդին Գ-ը նույնպես ուղղակի ժառանգ չէր թագավորական գահի, նա էլ Լեւոն Գ-ի շորս խնամակալներից մեկի՝ Հեթում սենեկապետ Նղիրցու որդին էր, Կոստանդին Գ-ի հորեղբոր որդին (էջ 443) եւ արյունակցական կապի մեջ էր Կիլիկիայում գահակալող ընտանիքի հետ: Փաստ, որը փորձում է ժխտել ժան Դարդելը: Հեղինակն ուշադրություն է հրավիրում վերջին երկու Կոստանդին թագավորների նկատմամբ ժան Դարդելի թշնամական վերաբերմունքի վրա, անդրադառնում է Կիպրոսի թագավոր Պետրոս Ա-ի հետ մշակած համատեղ ծրագրին (էջ 445-55): Դարդելը Կոստանդին Նղիրցուն է վերագրում իր թագավորությունը մամլուկներին հանձնելու մտահղացումը, որի պատճառով էլ իբր Հայոց իշխանները սպանել են նրան: Ուշ շրջանի ժամանակագիրներից մեկը կարծում է, որ նա շարունակել է թագավորել Լեւոն Ե-ից հետո, սակայն Լ. Տեր-Պետրոսյանը փաստում է, որ 1373 թ. հետո նրա անունն այլեւ չի հիշատակվում հայկական ձեռագրերի հիշատակարանների թվագրման բանաձեւերում:

Կիլիկիայի վերջին գահակալ Լեւոն Ե-ի գահակալմանն մասին խոսելիս՝ հեղինակն իր պարտքն է համարում անդրադառնալ ժան Դարդել պատմիչի երկին եւ նրա կողմից վերջին կիլիկյան թագավորի կենսագրության, Կիլիկիա ժամանման³⁹ եւ թագադրման մանրամասների բացահայտմանը: Ընդգծելով, որ Կիլիկյան թագավորության կործանումը եւ Սիս մայրաքաղաքի անկումը թույլ արձագանք են գտել դեպքերին ժամանակակից հայկական սկզբնաղբյուրներում,

³⁹ Հատկապես Կոստանդին Գ-ի կնոջ՝ Մարիոն թագուհու 1373 թ. խնամակալ դառնալու փաստը, Լեւոն Ե-ի նշանակած խնամակալների խորհրդի նշանակմանը: Հեղինակը մասնավորապես շեշտում է, որ Կիլիկիայում բացառիկ երեսույթ է կին խնամակալի նշանակումը, որը Լ. Տեր-Պետրոսյանը բացատրում է վերջինիս օձյալ լինելու հանգամանքով եւ արեւմտաեվրոպական թագավորական ընտանիքների հետ ազգակցական կապերով (էջ 437-438, 455):

հեղինակն անդրադառնում է Լեւոն Ե-ի հետագա ճակատագրին, եվրոպական արքունիքներում նրա դեգերումներին, Հայոց պետականության վերականգնման նրա երազային ծրագրերին: Լեւոն Ե-ի մահից հետո (1393 թ.), «Հայոց թագավոր» տիտղոսն անցնում է Կիպրոսի թագավորներին, նրանցից էլ Սավոյայի դուքսերին, Պիեմոնտի եւ Իտալիայի թագավորներին: Այս թագավորությունից մնացած «գործող հաստատություն» է համարում նաեւ Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսարանը (էջ 465):

Եզրափակման մեջ հեղինակը կետ առ կետ ընդհանրացնում է հետազոտության բոլոր հիմնական դրույթները. 1. գահաժառանգության կարգում ավագության սկզբունքի կիրառումը, 2. զավակների միջեւ ընտրություն կատարելու գահակալին վերապահված իրավասությունը, 3. որդիների միջեւ երկիրը բաժանելու իրավասությունը, 4. թագավորն երկիրը կարող էր կտակել ցանկացած մեկի, 5. որդիների նկատմամբ եղբայրներին նախապատվություն տալու իրավունքը, 6. արական գծով ժառանգի սպառման դեպքում գահն անցնում էր դստերը, 7. թագադրված արքայադստեր ամուսնու կարգավիճակին եւ նրանց զավակների ժառանգական իրավունքին վերաբերող հարցեր, 8. հարձորդիները զրկված էին գահը ժառանգելու իրավունքից, 9. թագավորի կողմից գահակից նշանակելու սովորույթը, 10. թագավորի ընտրության իրավունքը, 11. իշխանության բռնազավթման փորձերը, 12. Արքունի Աստվանի դերը, 13. խնամակալի գործակալությունը, 14. գահաժառանգությունն ապահովվել է սովորութային իրավունքով, 15. «լեգիտիմության» պահպանումը:

Ինչպես գրախոսվող գրքի առաջին հատորում, այնպես էլ ներկա մենագրության հավելվածում հրապարակվում են Կիլիկիայի պատմության մինչ օրս չհրապարակված սկզբնաղբյուրներ: Յուրաքանչյուր բնագրի ուղեկցում է պատմաղբյուրագիտական ուշագրավ հետազոտություն, պատմաբանասիրական եւ աղբյուրագիտական մանրակրկիտ ուսումնասիրությամբ եւ ծանոթագրություններով: Այս հատորի հավելվածները չորսն են. 1. Անանունի «Պատմութիւն սրբոց հարցն մերոց» աշխատությունը (էջ 495-526), 2. Հեթում Նղիրցու պատմությունը (էջ 527-553), 3. Անանուն ժամանակագրական գրառումներ (XIV դ.) (էջ 554-558), 4. Ավետիք Տիգրանակերտցու գավազանագիրքը (էջ 559-573):

Առաջին հավելվածը ԺԱ-ԺԲ դդ. Փոքր Ասիայի, Հայաստանի եւ Հյուսիսային Ասորիքի պատմության չափազանց կարեւոր սկզբնաղբյուր է: Երկրեզակի ընդօրինակությունը պահպանվում է Մաշտոցի անվան Մատենադարանի Խ^Թ 7620 մատյանում, ԺԸ դարի գրչական ընդօրինակությամբ: Հրատարակիչն իր գրած առաջաբանում անդրադառնում է այս հուշարձանում տեղ գտած կարեւորագույն պատմական տեղեկություններին, մասնավորապես հայագի-

տույթյանը քիչ հայտնի Սեւերակի Պողոսական իշխանության պատմությունը եւ թվագրում է հուշարձանը 1248-1275 թթ.:

Հաջորդ մատենագրական երկը հրատարակվում է Բրիտանական գրադարանի *Or.5458-Arm.116* մատյանից եւ հեղինակի կողմից վերագրվում է Հեթում Նղիրցուն: Բնագիրն ընդգրկում է 1099-1344 թթ. իրադարձությունների նկարագրությունը, որի ԺՊ դարն ընդգրկող հատվածը «հուշագրական նոթագրություն է հիշեցնում» (էջ 528), ուր նկարագրված են միջնադարյան հեղինակի գիվանագիտական այցելությունները: Լ. Տեր-Պետրոսյանն անդրադառնում է Կիլիկիայի թագավորության պատմության մեջ Նղիրի եւ այնտեղ կառավարող իշխանական ընտանիքի անդամների, մասնավորապես՝ Հեթումի խաղացած դերին, վերջինիս բացառիկ գիվանագիտական գործունեությունը: Ելնելով բնագրի ժանրային պատկանելությունից՝ այս երկը, կարծում ենք, պետք է անվանել ժամանակագրություն:

Երրորդ հավելվածը եւս հրատարակված է Բրիտանական գրադարանի նույն ձեռագրից եւ կարեւոր ժամանակագրական տեղեկություններ է պարունակում ԺՊ դարի երկրորդ կեսի իրադարձությունների մասին:

Գրքի վերջին հավելվածում հրապարակված է ԺԷ-ԺԸ դ. հեղինակ Ավետիք Տիգրանակերտցու (նաեւ Ամիրեցի կամ Եվդոկացի) Գավազանագրքի (կամ ժամանակագրության)՝ Կիլիկիայի վերաբերող հատվածը ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի ԽՎ 1492 ինքնագիր մատյանի: Ընդգծելով այս ժամանակագրության քաղաքական բնույթը եւ նրանում պարունակող տեղեկությունների այլ սկզբնաղբյուրներից հայտնի լինելը՝ բնագրի հրատարակիչը խնդիր է դրել երկի հրատարակմամբ ուղղել Լեւոն Ե վերջին թագավորի գահակալման թվականների հետ կապված մի թյուրիմացություն, որը շրջանառության մեջ է ժամակակից պատմագրության մեջ:

Աշխատանքի բարձր որակի մասին են խոսում նաեւ հեղինակի կազմած մանրակրկիտ ցանկերը (էջ 575-667), որոնք կարեւոր բանալի են գրքի օգտագործման համար:

Մեր առջեւ է հսկայածավալ մի հետազոտություն, ուր միջնադարագետ-պատմաբանի, աղբյուրագետի եւ քաղաքագետի տեսանկյունից վերարձարձված են Կիլիկիայի հայկական պետության պատմության բազմաթիվ խնդիրներ առաջարկված թեմայի շրջանակներում, քննարկված են մինչ այս ուշագրության շարժանացած հարցեր: Մեր կողմից աշխատության մարամասների քննարկումը նպատակ ուներ հետազոտողների ուշագրությունը գրավել առանձին հարցերի լուծումների վրա: Կատարված դիտողությունները վերաբերում են աշխատության դետալներին եւ ցույց են տալիս այն հսկայածավալ աշխատանքի կարեւորությունը, որով Լեւոն Տեր-Պետրոսյանն իր լուծման է դնում

Կիրիկյան Հայաստանի պատմության քննարկված հիմնախնդիրների պարզաբնաման մեջ: Աշխատության յուրաքանչյուր տողում իրար են լրացնում վաստակաշատ աղբյուրագետ-պատմաբանն ու հսկայական փորձ ունեցող քաղաքագետը՝ հեղինակին հատուկ բյուրեղացած հայերենով ու հատու գրչով: